

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԾԻԳ ՊՀ**

**ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՃԱՆԱՊԱՐՀԱՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ**



**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ**

**Կենսական նշանակություն ունեցող ճանապարհային ցանցի
ընտրված հատվածների վերականգնման համար**

Երևան 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....	3
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒՅԹՈՒՆՆԵՐ	5
ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ	7
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԴԱՇՏ	12
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	14
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ.....	16
ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ	17
ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	20
ԲԿՊ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ	21
ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ	22
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆՆԵՐ	22
Հավելված I: Ճանապարհների փոքրածավալ շինարարության կամ վերականգնման համար մշակված Բնապահպանական կառավարման պլանի ստուգաթերթիկ	25
Հավելված II: Բնապահպանական վերահսկողության ստուգաթերթիկ.....	32
Հավելված III: Բնապահպանական կառավարման ուղեցույցեր կապալառուների համար.....	34
Հավելված IV: Հանրային խորհրդակցության արձանագրություն	38

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԲԳ	Բնապահպանական գնահատում
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վևա ազդեցության գնահատում
ԲԿՇՓ	Բնապահպանական կառավարման շրջանակային փաստաթուղթ
ԲԿՊ	Բնապահպանական կառավարման պլան
ՎԶՄԲ	Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ
ՄԶԸ	Միջազգային զարգացման ընկերակցություն
ԿՆՃԲ ծրագիր	Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր
ՏԿՆ	Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն
ԲՆ	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն
ՈԿԿ	Ոչ կառավարական կազմակերպություն
Շ&Պ	Շահագործում և պահպանում
ԳՔ	Գործառնական քաղաքականություն
Տրանսպորտի ԾԻԳ	Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՊՀ	Պետական հիմնարկ
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՀԲ	Համաշխարհային բանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը դիմել է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկին (ՎԶՄԲ) 45 մլն ԱՄՆ դոլարի չափով վարկ ստանալու նպատակով՝ Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագրի (ԿՆՃԲ ծրագիր) իրականացման՝ 2013-2015թթ. ընթացքում Հայաստանի տարբեր մարզերում տեղակայված տեղական ճանապարհների վերակառուցման և վերականգնման համար: Ի լրումն այս ֆինանսավորման, Հայաստանի Հանրապետության կառավարությունը կտրամադրի իր ներդրումը՝ մոտ 11.2 մլն ԱՄՆ դոլարին համարժեք: Ծրագրի առաջին տարվա աշխատանքներում ներառված մոտ 70 կմ ճանապարհների վերականգնման աշխատանքները կավարտվեն 2013թ. վերջում, իսկ պայմանագրով սահմանված թերությունների վերացման ժամանակաշրջանը կտևի մինչև 2014թ. ավարտը:

ԿՆՃԲ ծրագիրն անմիջական տնտեսական խթան կհանդիսանա գյուղական համայնքների համար՝ ապահովելով աշխատատեղեր և վերակազմված կենսական նշանակության ենթակառուցվածքից երկարաժամկետ կտրվածքով օգտվելու հնարավորություն: Ի լրումն նշված տնտեսական օգուտների (գյուղատնտեսական արտանքների շուկաների հասանելիություն, աշխատատեղերի ստեղծում և այլն)՝ գյուղական բնակչության համար կբարելավվեն նաև սոցիալական պայմանները՝ կրթական, բժշկական և սոցիալական ծառայությունների հասանելիության ավելացման արդյունքում:

ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարությունը (ՏԿՆ) պատասխանատու կլինի ԿՆՃԲ ծրագրի ընդհանուր իրականացման համար և կիրականացնի այդ գործառույթը Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ Պետական հիմնարկի (Տրանսպորտի ԾԻԳ) միջոցով:

ՏԿՆ-ն Տրանսպորտի ԾԻԳ-ի միջոցով կվարձի խորհրդատու կազմակերպություն, որը կիրականացնի ԿՆՃԲ ծրագրի առաջին տարվա աշխատանքներում ներառված ճանապարհների վերականգնման նախագծերի և Բնապահպանական կառավարման պլանների (ԲԿՊ) մշակման առաջադրանքը:

ԿՆՃԲ ծրագրի շրջանակներում նախատեսված բոլոր վերականգնման աշխատանքները կիրականացվեն գոյություն ունեցող ճանապարհների վրա և կներառեն ճանապարհահատվածների հիմնանորոգման, ծածկի վերականգնման աշխատանքները, ջրահեռացման համակարգերի վերականգնման և ճանապարհային անվտանգության ապահովման միջոցառումների իրականացումը՝ ապահովելով կայուն և հուսալի ճանապարհների առկայությունը:

Համաձայն Համաշխարհային բանկի կանոնների, ԿՆՃԲ ծրագրի համար կիրառելի է բանկի թիվ 4.01 «Բնապահպանական գնահատում» Գործառնական քաղաքականությունը: Այսպիսով, ներկայացված ծրագիրը ենթակա է բնապահպանական ստուգման և ուսումնասիրության: Հաշվի առնելով, որ ծրագիրը ֆինանսավորում է նմանատիպ վերականգնողական աշխատանքների իրականացումը երկրի տարբեր վայրերում, որոնց հետ առնչվող բնապահպանական ազդեցությունները նմանատիպ են, բնապահպանական ուսումնասիրության գործընթացը ներառում է Բնապահպանական կառավարման

շրջանակային փաստաթղթի (ԲԿՇՓ) և ճանապարհի յուրաքանչյուր հատվածի համար ստուգաթերթիկի ջնաչափով Բնապահպանական կառավարման պլանների մշակումը:

Տեղական նշանակության ճանապարհների բարեկարգման ծրագրի և դրա լրացուցիչ ֆինանսավորումների համար մշակված Բնապահպանական կառավարման շրջանակային փաստաթուղթը հիմք է հանդիսացել ԿԼՃԲ ծրագրի համար ԲԿՇՓ մշակման ժամանակ: Սույն ԲԿՇՓ-ն կենսական նշանակության ճանապարհների վերականգնման համար հանդիսանում է ընդհանուր բնապահպանորեն ընդունելի գործընթացի ուղեցույց: Ստուգաթերթիկի ձևաչափով Բնապահպանական կառավարման պլանները (ԲԿՊ) կմշակվեն ծրագրում ներառված բոլոր ճանապարհահատվածների համար:

ՀԱՄԱՇԽԱՐԿԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒՅԹՈՒՆՆԵՐ

Համաշխարհային բանկի թիվ 4.01 «Բնապահպանական գնահատում» Գործառնական քաղաքականությունը դիտարկվում է որպես բանկի բնապահպանական անվտանգության ապահովման քաղաքականությունների համապարփակ փաստաթուղթ: Այս քաղաքականությունները կարևորվում են բնապահպանական և սոցիալական հնարավոր անբարենպաստ հետևանքների բացահայտման, նվազեցման և պատշաճ մեղմացման տեսանկյունից: Այս քաղաքականություններին առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ծրագրի նախապատրաստման և հաստատման ժամանակ: Համաշխարհային բանկը ստուգում է յուրաքանչյուր առաջարկված ծրագիրը՝ կիրառելի բնապահպանական գնահատման շրջանակները և տեսակը որոշելու համար, ինչպես նաև բնապահպանական անվտանգության ապահովման քաղաքականությունների կիրառման անհրաժեշտությունը բացահայտելու նպատակով: Համաշխարհային բանկի անձնակազմի հետ խորհրդակցելով՝ Վարկառուն պարտավոր է իրականացնել ցանկացած գնահատում, որը պահանջվում է բնապահպանական անվտանգության ապահովման քաղաքականություններով: Բնապահպանական անվտանգության ապահովման քաղաքականությունները և դրանցից յուրաքանչյուրի կիրառումը հարուցող գործոնները ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

Գործառնական քաղաքականություն	Գործոններ
Բնապահպանական գնահատում (ՕՔ 4.01)	Ծրագիրն իր ազդակիր տարածքում կարող է ունենալ հնարավոր (անբարենպաստ) բնապահպանական ռիսկեր և ազդեցություններ:
Անտառներ (ՕՔ 4.36)	Անտառային ոլորտի գործունեություն կամ Բանկի կողմից ֆինանսավորվող այլ միջամտություններ, որոնք կարող են զգալիորեն ազդել անտառածածկ տարածքների վրա:
Հարկադիր	Տիզիկական վերաբնակեցում և հողի կորուստ, որը բերում է՝

Գործառնական քաղաքականություն	Գործոններ
Վերաբնակեցում (OP 4.12)	(i) տեղահանմանը կամ բնակության վայրի կորուստին, (ii) գույքի կամ դրա մատչելիության կորուստին, (iii) եկամտի աղբյուրների կորուստին՝ անկախ ազդակիր մարդկանց վերաբնակեցնելու անհրաժեշտությունից:
Տեղաբնիկներ (OP 4.10)	Ծրագրի ազդակիր տարածքում տեղաբնիկների առկայության, դրանց վրա հնարավոր անբարենպաստ ազդեցության կամ տեղաբնիկներին որպես ծրագրի շահառուներ դիտարկելու դեպքում:
Պատվարների անվտանգություն (OP 4.37)	Եթե ծրագիրը ներառում է մեծ (պատվարի բարձրությունը 15մ և ավելի) կամ բարձր ռիսկայնություն ունեցող ջրամբարի կառուցում, եթե ծրագիրն առնչվում է արդեն իսկ գոյություն ունեցող կամ կառուցվող ջրամբարներին:
Վնասատուների կառավարում (OP 4.09)	<p>Եթե ծրագիրը ներառում է թունաքիմիկատների գնում, եթե ծրագիրը կարող է ազդել վնասատուների կառավարման վրա, այսպես, որ կարող է հասցվել վնաս, նույնիսկ եթե թունաքիմիկատներ չեն ձեռք բերվելու:</p> <p>Այս քաղաքականությունը ներառում է այն ծրագրերը, որոնք կարող են. (i) բերել թունաքիմիկատների կիրառման զգալի աճին, դրանով իսկ բարձրացնելով առողջապահական և բնապահպանական ռիսկը, (ii) պահպանել կամ նպաստել վնասատուների դեմ պայքարի կիրառվող անկայուն և վնասատուների դեմ հնտեգրացված պայքարի մոտեցումներին չհամապատասխանող գործունեության տարածմանը, և/կամ ներկայացնել զգալի բնապահպանական և սոցիալական ռիսկեր:</p>
Ֆիզիկական մշակութային ռեսուրսներ (OP 4.11)	Քաղաքականությունը կիրառվում է այն դեպքերում, երբ ծրագիրը ներառում է, առաջին հայացքից, մշակութային արժեքներին վնաս հասցնելու ռիսկ (օրինակ՝ եթե ծրագիրը ներառում է լայնամասշտաբ հողային աշխատանքներ, հողի տեղափոխում, մակերեսի փոփոխություն կամ քանդում):
Բնական բնադրավայրեր (OP 4.04)	Քաղաքականությունը կիրառվում է ցանկացած ծրագրի դեպքում, երբ կարող է զգալի վնաս հասցվել բնական միջավայրին՝ ուղղակիորեն (շինարարություն) կամ անուղղակիորեն (ծրագրի իրականացմամբ պայմանավորված այլ գործունեության արդյունքում):
Վիճակի տարածքներում իրականացվող ծրագրեր (OP 7.60)	Քաղաքականությունը կիրառվում է այն դեպքում, երբ նախատեսվող ծրագիրն իրականացվում է «վիճելի տարածքում»:
Միջազգային	Եթե ծրագիրն իրականացվում է միջազգային ջրհոսքի վրա,

Գործառնական քաղաքականություն	Գործոններ
ջրհոսքերի վրա իրականացվող ծրագրեր (OP 7.50)	ինչպիսին է ցանկացած գետ, ջրանցք, լիճ, կամ այլ ջրային մարմին, որը սահման է հանդիսանում երկու պետությունների միջև, կամ մակերևութային ջրային մարմին, որը ներհոսում է մի երկրի տարածք մյուսից (կամ ցանկացած վտակ կամ այլ մակերևութային ջրային մարմին, որը հանդիսանում է միջազգային ջրհոսքի մաս), ցանկացած ծովածոց, նեղուց, ջրանցք, որը սահմանակցում է երկու և ավել պետություններին, կամ մի պետության տարածքում գտնվելու դեպքում դիտարկվում է որպես ծովը այլ պետության հետ կապող անհրաժեշտ ջրանցք, և ցանկացած գետ, որը ներհոսում է նման ջրային մարմին:

ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 10-րդ հոդվածը (ընդունվել է 1995թ. և վերանայվել 2005թ.) սահմանում է, որ «Պետությունը ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերարտադրությունը, բնական պաշարների բանական օգտագործումը»: Սկսած 1991թ. շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ, բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր և կանոնակարգեր են ընդունվել: Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքների ցանկը ներկայացված է ստորև.

- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին (1992),
- Մթնոլորտային օդի պահպանության մասին (1994),
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին (1995),
- Պատմական և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998),
- Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին (1998),
- Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին (2006),
- Բուսական աշխարհի մասին (1999),
- Կենդանական աշխարհի մասին (2000),
- ՀՀ հողային օրենսգիրք (2001),
- Բնապահպանական կրթության մասին (2001),
- ՀՀ ջրային օրենսգիրք (2002),
- ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք (2002),
- Թափոնների մասին (2004),
- Բնապահպանական մոնիտորինգի մասին (2005),
- Բնապահպանական վերահսկողության մասին» (2005),
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006),

- ՀՀ անտառային օրենսգիրք (2005),
- Տրանսպորտի մասին (1998),
- Ավտոմոբիլային ճանապարհների մասին (2006),
- Հրաման N2-III-11.3 «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերը հաստատելու մասին: Ուժի մեջ է մտել 13.04.2002թ:

Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագրին առնչվող ցանկում բերված օրենքների հակիրճ նկարագրությունը ներկայացված է ստորև.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին օրենք (1995)

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության (ՇՄՎԱՓ) մասին օրենքը, որն ընդունվել է 1995թ-ին, սահմանում է նախագծային գործունեության և հայեցակարգային փաստաթղթերի պետական փորձաքննության իրականացման իրավական հիմունքները, ինչպես նաև ներկայացնում է Հայաստանում իրականացվող տարբեր ծրագրերի և գործունեության Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության գործընթացի հիմնական քայլերը: ՇՄՎԱՓ-ն պետության կողմից անցկացվող պարտադիր գործունեություն է: Օրենքի հոդված 2-5-ում սահմանվում են տարբեր ծրագրերի և ոլորտային զարգացման հայեցակարգերի (օր.՝ էներգետիկա, լեռնահանքային արդյունաբերություն, քիմիական արդյունաբերություն, շինանյութերի արդյունաբերություն, մետալուրգիա, փայտի և թղթի արդյունաբերություն, գյուղատնտեսություն, սննդի արդյունաբերություն և ձկնային տնտեսություն, ջրային տնտեսություն, էլեկտրատեխնիկական արտադրություն, ենթակառուցյուններ, սպասարկման ոլորտ, զբոսաշրջիկություն և հանգիստ, և այլն) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պարտադիր գործընթացի իրականացման հիմնական իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքները: Օրենքը նույնպես նախատեսում է ճանապարհների ոլորտին ուղղակիորեն առնչվող դրույթներ: Մասնավորապես, օրենքի հոդված 4-ում «Փորձաքննությանը ենթակա նախատեսվող գործունեությունը» սահմանվում են նախատեսվող գործունեության այն տեսակները, որոնք ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման: Ենթակառուցվածքների ոլորտում դա նվազագույն չափաքանակները գերազանցող մայրուղիների, թունելների, կամուրջների, ստորերկրյա ուղիների, երկաթուղու, օդանավակայանների և ճանապարհների կառուցումն է (նվազագույն չափաքանակները սահմանվել են ՀՀ կառավարության N193 որոշմամբ, որն ընդունվել է 1999թ. մարտի 30-ին): Օրենքն արգելում է, որպեսզի որևէ տնտեսական միավոր գործի կամ որևէ հայեցակարգ, ծրագիր, համալիր սխեմա կամ գլխավոր հատակագիծ իրականացվի առանց ՇՄՎԱՓ դրական եզրակացության: Ի լրումն նշվածի, ՇՄՎԱՓ գործընթացը կարող է նախաձեռնվել նաև այն ծրագրերի համար, որոնք չեն գերազանցում նվազագույն չափաքանակների պահանջները: Համաձայն

հողված 4-ի նման իրավունք է տրված տեղական ինքնակառավարման մարմիններին, նախարարություններին, համայնքներին և ՀԿ-ներին: ՀՀ օրենսդրությունը նախատեսում է նաև այս գործընթացի ձեռնարկում «հատուկ պահպանվող» տարածքներում նախատեսված գործունեության համար: Բնապահպանության նախարարությունը նույնպես կարող է անհրաժեշտության դեպքում նախաձեռնել շրջակա միջավայրի ազդեցության վերանայում: ՇՔՎԱՓ մասին օրենքը սահմանում է ծանուցման, փաստաթղթերի պատրաստման, հանրային լուսմների և բողոքարկման կարգը և պահանջները: ՇՔՎԱՓ մասին օրենքը նույնպես սահմանում է հանրային լուսմների ներգրավման և մասնակցության պահանջը: Օրենքը պահանջում է, որ ցանկացած տնտեսական գործունեության, պլանի կամ ծրագրի իրականացման համար ՀՀ բնապահպանության նախարարության Պետական բնապահպանական փորձաքննություն Պետական ոչ-առևտրային կազմակերպության կողմից ստացվի դրական եզրակացություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ:

ՇՄՎԱՓ մասին օրենքն ընդհանուր առմամբ համահունչ է միջազգային կոնվենցիաների և զարգացմանն աջակցող կազմակերպությունների (օրինակ՝ Համաշխարհային բանկ (WB), ԱՄՆ ՄՁԳ (USAID), ԵԽ (EU), ՀՄԿ (MCC), և այլն) բնապահպանական գնահատման մոտեցումներին: Օրենքը կիրառելի է հետևյալ գործընթացների համար՝ շինարարություն, փոխարինում, ընդլայնում, տեխնիկական համալրում և փակում: Նման դեպքերում որևէ նախագծի կամ ծրագծի իրականացման համար անհրաժեշտ է ՀՀ բնապահպանության նախարարությանը ենթակա «Պետական բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ից ստանալ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացությունը: Սույն Օրենքը նաև ապահովում է հանրության ներգրավումն ու մասնակցությունը ՇՄԱՓ բոլոր փուլերին: ԿՆՃԲ ծրագրով նախատեսված աշխատանքները ներառելու են արդեն իսկ գոյություն ունեղոց ճանապարհների ծածկի վերականգնումը:

Հողային օրենսգիրք (2001)

Հողային օրենսգիրքը սահմանում է տարբեր նպատակների (ինչպիսիք են գյուղատնտեսությունը, քաղաքացիական շինարարությունը, արդյունաբերությունը և հանքարդյունաբերությունը, էլեկտրաէներգիայի արտադրությունը, փոխակերպումները և հաղորդակցության միջոցները, տրանսպորտը) համար ծառայող պետական հողերի օգտագործման կառավարումը: Այն տարածքները, որոնք օգտագործվում են երկաթուղու, կամուրջների և թունելների համար, ինչպես նաև հարակից անօտարելի տարածքները, համարվում են երթևեկության նպատակով օգտագործվող հողատարածքներ: Օրենքը սահմանում է նաև հատուկ պահպանվող տարածքների, անտառային, ջրային և պահուստային հողերը, ինչպես նաև անդրադառնում է հողերի պահպանությանն ուղղված միջոցառումներին, պետական/տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների իրավասություններին:

Թափոնների մասին օրենք (2004)

Օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, տեղափոխման, կուտակման, մշակման, կրկնակի օգտագործման, հեռացման, ծավալի փոքրացման խնդիրներին վերաբերվող իրավական և տնտեսական հարաբերությունները, ինչպես նաև շրջակա միջավայրի, մարդու կյանքի և առողջության վրա դրանց բացասական ազդեցության կանխումը: Օրենքը սահմանում է թափոնների օգտագործման օբյեկտները, պետական քաղաքականության հիմնական սկզբունքները և ուղղությունները, պետական ստանդարտավորման սկզբունքները, գույքագրումը, վիճակագրական տվյալների ներմուծումը, պահանջների իրականացման մեխանիզմները, թափոնների վերամշակման սկզբունքները, թափոնների պետական մոնիտորինգի իրականացման սկզբունքները, թափոնների քանակի կրճատմանն ուղղված գործողությունները՝ ներառյալ բնօգտագործման վճարները, ինչպես նաև իրավական և ֆիզիկական անձանց կողմից բնությանը և մարդու առողջությանը պատճառված վնասի դիմաց փոխհատուցումը, թափոնների օգտագործումը, պետական մոնիտորինգի իրականացման պահանջները և իրավական խախտումները: Օրենքը սահմանում է նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև իրավաբանական անձանց ու անհատների իրավունքներն ու պարտականությունները:

Բնապահպանական վերահսկողության մասին օրենք (2005)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները և սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունները, կարգերը, պայմանները, դրանց հետ կապված հարաբերությունները և բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

Ավտոմոբիլային ճանապարհների մասին օրենք (2006)

Օրենքը կարգավորում է ավտոմոբիլային ճանապարհների ցանցի զարգացման և կառավարման համար տնտեսական, իրավական և կազմակերպչական դաշտերը; Հայաստանի Հանրապետության ճանապարհների նախագծումը, շինարարությունը, վերանորոգումը և պահպանումը, դասակարգումը և գրանցումը, ինչպես նաև կարգավորում է իրավական հարաբերությունները այդ ֆունկցիաները իրականացնող ղեկավար մարմինների և կազմակերպությունների միջև:

Բնական ռեսուրսների և շրջակա միջավայրի պահպանությունը կարգավորող գործող իրավական շրջանակը ներառում է բազմապիսի իրավական փաստաթղթեր: Կառավարության որոշումները հանդիսանում են շրջակա միջավայրին առնչվող օրենքների իրականացումն ապահովող հիմնական գործիքները: Շրջակա միջավայրի ոլորտը նույնպես կարգավորվում է Նախագահի հրամանագրերով, Վարչապետի որոշումներով և նախարարների հրամաններով:

Միջազգային համաձայնագրեր

Ի լրումն բնության պահպանությանն առնչվող վերոնշյալ օրենքների ցանկի և հակիրճ նկարագրությանը, բազմաթիվ ռազմավարությունների, հայեցակարգային փաստաթղթերի և ազգային ծրագրերի Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և վավերացրել է մի շարք միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ: Ստորև բերված ցանկը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված և վավերացված այն կոնվենցիաները և արձանագրությունները, որոնք առնչվում են ԿՆՃԲ Ծրագրին.

- Կենսաբազմազանության մասին Կոնվենցիան (Ռիո-դե-ժանեյրո, 1992թ.),
- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու-Յորք, 1992թ.) և Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997թ.),
- ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիա (Փարիզ, 1994թ.),
- ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրիուս, 1998թ.):

Թույլտվություններ

ԿՆՃԲ ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բնապահպանական թույլտվությունները՝ ներառյալ դրանց տրման համար պատասխանատու մարմինները և ստացման մոտավոր ժամկետները ամփոփված են ստորև բերված աղյուսակում.

Թույլտվության անվանումը	Թույլտվություն տրամադրող մարմինը	Թույլտվության ստացման ժամկետը
Շինարարության լիցենզիա	ՀՀ Քաղաքաշինության նախարարություն	Նախագծային փուլից հետո, մինչև շինարարական աշխատանքների սկիզբը
Պետավտոտեսչության թույլտվություն	ՀՀ Ճանապարհային ոստիկանություն	Նախագծային փուլի ժամանակ, երթևեկության կառավարման պլանի հաստատում
Շինարարության թույլտվություն	Համապատասխան համայնքի ղեկավար	Մինչև շինարարական աշխատանքների սկիզբը
Շինարարական հրապարակի վարձակալության կամ սեփականության փաստաթղթեր	Սեփականատեր	Շինարարական հրապարակ հիմնելուց առաջ
Հանքարդյունաբերության լիցենզիա*	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	Շինարարական փուլի ժամանակ

Թույլտվության անվանումը	Թույլտվություն տրամադրող մարմինը	Թույլտվության ստացման ժամկետը
Խճի գնման դեպքում առքուվաճառքի փաստաթղթեր	Հավաստագրված վաճառող	Շինարարական փուլի ժամանակ՝ խճի գնման դեպքում
Սահմանային թույլատրելի արտահոսքի թույլտվություն	ՀՀ Բնապահպանության նախարարություն	Շինարարական փուլի ժամանակ
Շինարարական թափոնների տեղադրման համաձայնություն	Համապատասխան համայնքի ղեկավար	Շինարարական թափոնների տեղադրումից առաջ, աշխատանքների ավարտի սերտիֆիկատի ներկայացումից առնվազն 3 ամիս առաջ

* Շինարարական նյութերի գնման դեպքում հանքավայր շահագործողը պետք է ունենա ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից տրված համապատասխան թույլտվություն:

Բոլոր վերոնշյալ թույլտվությունները առնչվում են ԿՆՃԲ ծրագրի իրականացմանը, սակայն դրանցից որոշները կարող են անհրաժեշտ չլինել՝ կախված աշխատանքների բնույթից և կազմակերպումից (օրինակ՝ խճի գնման դեպքում կապալառուն պարտավոր չէ ներկայացնել հանքարդյունաբերության լիցենզիա, սակայն խիճ արտադրող ընկերությունը պետք է ունենա գործող հանքարդյունաբերության լիցենզիա):

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԴԱՇՏ

Սույն բաժնում հակիրճ ամփոփված են բնապահպանության, սակայն ոչ միայն այդ տեսանկյունից, ԿՆՃԲ ծրագրի իրականացմանը հնարավոր առնչություն ունեցող պետական մարմինների գործառույթները:

Բնապահպանության նախարարություն

Բնապահպանության նախարարությունը (ԲՆ) պատասխանատու է ՀՀ-ում բնական ռեսուրսների պահպանության, կայուն օգտագործման և վերականգնման, ինչպես նաև շրջակա միջավայրի բարելավման համար: Նշված ոլորտներում, ԲՆ-ի լիազորությունները ընդգրկում են. ազգային քաղաքականության մշակման վերահսկումը, բնապահպանական ստանդարտների և ուղեցույցերի մշակումը և կիրառումը: ԲՆ-ն իրականացնում է այս ֆունկցիաները հետևյալ ստորաբաժանումների միջոցով.

- Նորմատիվամեթոդական վարչություն (ներառյալ Օրենսդրության բաժինը և Ստանդարտների և տեխնիկական կանոնակարգերի բաժինը),
- Միջազգային համագործակցության վարչություն,

- Շրջակա միջավայրի պահպանության վարչություն (ներառյալ Կենսաբազմազանության և ջրային ռեսուրսների պահպանության բաժինը և Հողերի և մթնոլորտի պահպանության բաժինը),
- Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարման բաժին,
- Բնապահպանության և բնօգտագործման էկոնոմիկայի բաժին,
- Ընդերքի պահպանության վարչություն,
- Օդերևութաբանության և մթնոլորտային օդի մոնիտորինգի բաժին:

ՀՀ Բնապահպանության նախարարությունը իրագործում է մի շարք այլ գործառույթներ՝ իր ենթակայության տակ գտնվող հետևյալ կառույցների միջոցով.

- Զրային ռեսուրսների կառավարման գործակալություն,
- Պետական բնապահպանական փորձաքննություն ՊՈԱԿ (իրականացնում է շրջակա միջավայրի գնահատումը, տրամադրում է եզրակացությունը),
- Հանրապետական բնապահպանական տեսչություն,
- Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն ՊՈԱԿ
- Կենսառեսուրսների կառավարման գործակալություն:

Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն

Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը էներգետիկայի և բնական պաշարների կառավարման բնագավառում: Նախարարությունը նույնպես պատասխանատու է բնական ռեսուրսների պահպանության, կայուն օգտագործման և վերարտադրության համար և իր գործունեությունն է իրականացնում հետևյալ կառույցների միջոցով.

- Ընդերքի տրամադրման գործակալություն
- Օգտակար հանածոների պաշարների գործակալություն:

Արտակարգ իրավիճակների նախարարություն

Արտակարգ իրավիճակների նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում, իրականացնում և համակարգում է իր իրավասությանը վերապահված քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն ՊՈԱԿ-ը հանդիսանում է Արտակարգ իրավիճակների նախարարության կազմում գործող կառուցվածքային մարմիններին մեկը:

Տրանսպորտի և կապի նախարարություն

Տրանսպորտի և կապի նախարարությունը հադիսանում է գործադիր իշխանության հանրապետական մարմին, որը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում: ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության կազմում գործող ճանապարհային

ուլորտին առնչվող հիմնական ստորաբաժանումն է հանդիսանում Ճանապարհինական վարչությունը, որը հիմնականում պատասխանատու է հանրապետության ճանապարհային ցանցի բարելավմանը և հետագա զարգացմանն ուղղված պետական քաղաքականության մշակման համար:

ՏԿՆ-ի Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ-ն հանդիսանում է ՀՀ կառավարության կողմից ստեղծված կազմակերպություն, որն իրականացնում է ՏԿՆ-ի և տարածքային վարչական մարմինների կողմից մշակված և ՀՀ կառավարության կողմից հաստատված տրանսպորտի ոլորտի ներդրումային և զարգացման ծրագրերը, որոնք ի կատար են ածվում պետական բյուջեի և արտասահմանյան պետությունների ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված ֆինանսավորմամբ:

Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն ՊՈԱԿ-ը ՀՀ կառավարության կողմից ստեղծված կազմակերպություն է, որը ներգրավված է ճանապարհային ցանցի բարելավմանն ու ընդլայնմանն ուղղված ծրագրերի մշակմանը, ճանապարհների զարգացման, շահագործման և պահպանման տարատեսակ ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացմանը:

Տարածքային կառավարման նախարարություն

Մարզպետարանները (տարածքային կառավարման մարմինները) պատասխանատու են իրենց իրավասության տակ գտնվող տեղական նշանակության ընդհանուր օգտագործման ճանապարհների կառավարման համար: Տեղական ինքնակառավարման մարմինները (համայնքները) իրականացնում են որպես համայնքի սեփականություն գրանցված տեղական նշանակության ընդհանուր օգտագործման ճանապարհների կառավարումը:

Առողջապահության նախարարություն

Առողջապահության նախարարության Պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությունը պատասխանատու է առողջությանն առնչվող բոլոր խնդիրների համակարգման (ներառյալ աղմուկը և ցնցումները/վիբրացիան) և կազմակերպությունների ու քաղաքացիների կողմից իրականացվող սանիտարական նորմերի, հիգիենիկ և հակահամաճարակային միջոցների վերահսկողության իրականացման համար:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Առաջարկվող ԿՆՃԲ ծրագրի հիմնական նպատակն է գյուղական համայնքների համար տնտեսական և սոցիալական ծառայությունների մատչելիության բարելավումը՝ գյուղական ճանապարհային ցանցի ընտրված հատվածների վերականգնման և աշխատատեղերի ստեղծման արդյունքում: ԿՆՃԲ ծրագիրը կներառի մոտավորապես 200կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհ: Կվերականգնվի ընտրված ճանապարհահատվածների ծածկը, իսկ

գրունտային ճանապարհները կասֆալտապատվեն: Երթևեկության և ճանապարհի վիճակի ցուցանիշներից ելնելով՝ կօգտագործվեն արդյունավետ տեխնիկական նախագծային ստանդարտներ, ինչպիսիք ներկայումս կիրառվում են Կենսական ճանապարհահատվածների բարելավման ծրագրի համար: Ծրագրի առաջին տարվա ընթացքում վերականգնվելիք ճանապարհների հատվածներն արդեն իսկ որոշված են և դրանց նախագծերը կազմված են: Ծրագրի երկրորդ և երրորդ տարվա աշխատանքները պարզ կդառնան Ծրագրի իրականացման ընթացքում: Ծրագիրը կֆինանսավորի նաև փոքր ձեռնարկությունների ներգրավմամբ իրականացվող պիլոտային շահագործման պայմանագիրը, և վերականգնմանն ու շահագործմանը վերաբերող երկու փոքր պիլոտային պայմանագրերը:

ԿՆՃԲ ծրագրի առաջին տարվա աշխատանքներում ընդգրկված ճանապարհահատվածները, դրանց տեղակայման վայրի ու երկարության վերաբերյալ տվյալները ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

**ԿՆՃԲ ծրագրի առաջին տարվա աշխատանքներում
ներառված ճանապարհների ցանկը**

Հարվածի #	Մարզ	Ճանապարհահատված	Մոտավոր երկարությունը (կմ)
1	Արագածոտն	Մ9 – Արտենի – Արագած – Գետափ կմ 25+940 – կմ 49+250	23.3
2	Արագածոտն	Մ1 – Ագարակ – Բյուրական – Անտառուտ կմ 0+000 – կմ 8+650	8.65
3	Արմավիր	Մ5 – Նոր Կեսարիա – Շենավան – Գետաշեն կմ 1+900 – կմ 6+700	4.8
4	Գեղարքունիք	Մ10 – Ներքին Գետաշեն – Վերին Գետաշեն – Մադինա կմ 0+000 – կմ 10+100	10.1
5	Կոտայք	Մայակովսկի – Նոր Գյուղ – Կոտայք – Կապուտան – Զովաշեն կմ 0+000 – կմ 4+500 և կմ 7+000 – կմ 19+800	17.3
6	Լոռի	Մ7 – Արևաշող	2.5
7	Սյունիք	Մ12 – Կոռնիձոր	4.5
Ընդամենը			71.15

* ԿՆՃԲ ծրագրի առաջին տարվա աշխատանքներում ներառված ճանապարհահատվածների երկարությունները նախնական են, հատվածների երկարության վերջնական տվյալները կորոշվեն վերջնական նախագծերի հիման վրա:

Առաջարկվող ծրագիրը կիրականացվի ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության Տրանսպորտի ծրագրի իրականացման գրասենյակի (Տրանսպորտի ԾԻԳ) կոմիտեի: Տրանսպորտի ԾԻԳ-ն ունի Համաշխարհային բանկի և այլ դոնոր կազմակերպությունների հետ աշխատելու փորձ: Տրանսպորտի ԾԻԳ-ն ունի ծրագրի պատշաճ իրականացման՝ ներառյալ անվտանգության պահանջներին համապատասխանության ապահովման, համար անհրաժեշտ աշխատակազմ և կարողություններ: Շինարարական աշխատանքների իրականացումը կվերահսկվի Տրանսպորտի ԾԻԳ-ի կողմից ընտրված

խորհրդատու կազմակերպության (Տեխնիկական վերահսկող) կողմից: Ի լրումն այլ գործառույթների, այս կազմակերպությունը կհետևի նաև շինարարական աշխատանքների իրականացման համապատասխանությանը ԲԿՊ-ների պահանջներին և կկատարի մեղմացնող միջոցառումների պատշաճ իրականացման մոնիտորինգ:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ

Բնապահպանական ստուգման իրականացման հիմնական նպատակն է՝ ապահովել բնապահպանական խնդիրների պատշաճ բացահայտումը և դրանց համապատասխան լուծումների ներկայացումը: Ծրագրով նախատեսված աշխատանքներն ունեն վերականգնողական բնույթ և իրականացվելու են գոյություն ունեցող հատվածների վրա: Այսպիսով, ակնկալվում է, որ ծրագրի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա չի լինի նշանակալի: Ընդհանուր առմամբ, երկարաժամկետ սոցիալական և բնապահպանական ազդեցությունները կլինեն դրական, մինչդեռ շրջակա միջավայրի վրա հնարավոր անբարենպաստ ազդեցությունները կլինեն փոքրածավալ, կարճաժամկետ և ամբողջությամբ կապված ճանապարհների վերականգնման աշխատանքների հետ: Ծրագրով նախատեսված գործունեությունը կարող է բերել ճանապարհի վերականգնվող հատվածներում երևելության ժամանակավոր դադարեցմանը: Հնարավոր է առաջանան ճանապարհային աշխատանքների իրականացմանը հատուկ փոշու արտանետումներ և աղմուկ, ինչպես նաև շինարարական աղբ: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների շահագործման արդյունքում հնարավոր է նաև նավթամթերքների ու քսայուղերի արտահոսք և շրջակա միջավայրի աղտոտում: Այս բոլոր հնարավոր բացասական ազդեցությունները սահմանափակ են, հաշվի առնելով ծրագրով նախատեսված աշխատանքների փոքր ծավալը, այդ աշխատանքների իրականացման վայրի սահմանափակ չափերը, և կմեղմացվեն ընդունված լավագույն բնապահպանական փորձի կիրառմամբ: Մարդու առողջության և բնական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կլինեն փոքրածավալ, քանի որ ծրագիրը ներառում է գոյություն ունեցող գյուղական ճանապարհների վերականգնում և չի նախատեսում աշխատանքների իրականացում մայրուղիների կամ այլ խոշոր ենթակառուցվածքների վրա: Առաջարկվող ծրագրի շրջանակներում չի նախատեսվում նոր ճանապարհների կառուցում: Քանի որ ծրագրով նախատեսված աշխատանքները իրականացվելու են գոյություն ունեցող ճանապարհահատվածների վրա, այն չի նախատեսում որևէ հողակտորի առգրավում / տնային տնտեսության կամ արտադրության ֆիզիկական տեղահանում / ծառերի և այլ բուսատեսակների հատում / եկամտի կորուստ: Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ ծրագրի իրականացումը չի առաջացնի նշանակալի կամ անդարձելի ազդեցություն արժեքավոր միջավայրի, անտառների և այլ էկոհամակարգերի վրա: Հիմնվելով ծրագրի շրջանակներում նախատեսված գործողությունների բնույթի վրա, բնապահպանական ստուգման արդյունքում այն դասակարգվել է որպես B դասի ծրագիր:

Ծրագրում ներառված ճանապարհների բոլոր հատվածների համար կմշակվեն ստուգաթերթիկի ձևաչափով ԲԿՊ-ները: Ճանապարհի հատվածի մակարդակով մշակված ԲԿՊ-ները կանդրադառնան տվյալ տեղանքում վերականգնողական աշխատանքների իրականացման հետ կապված բնապահպանական ռիսկերին, կառաջարկեն համապատասխան մեղմացման միջոցառումները, և կներկայացնեն մեղմացման պլանների իրականացումը վերահսկելու համար մշակված մոնիտորինգի սխեմաները: ԲԿՊ-ները կներառեն շինարարության և շահագործման փուլերը, և համապատասխանությունը դրանց պահանջներին պարտադիր կլինի ճանապարհների վերականգնման աշխատանքների պայմանագրերով, ինչպես նաև ճանապարհի շահագործման և ճանապարհի վերականգնման ու շահագործման պիլոտային պայմանագրերով ծառայություններ մատուցողների համար: Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ ԲԿՊ-ների պահանջների կատարումը բավարար կլինի՝ ծրագրի բնապահպանական ազդեցությունները թուլատրելի նվազագույն մակարդակի վրա պահելու համար:

ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ

Ընդհանուր առմամբ ակնկալվում է, որ տեղական ճանապարհների վերականգնման աշխատանքների հետ կապված շրջակա միջավայրի վրա հնարավոր անբարենպաստ ազդեցությունները կլինեն փոքրածավալ, կարճաժամկետ և տեղայնացված: Հնարավոր անբարենպաստ ազդեցությունների ճնշող մեծամասնությունը կդիտարկվի շինարարական / վերականգնման աշխատանքների իրականացման ընթացքում: Ընդհանուր առմամբ, շրջակա միջավայրի վրա ազդեցություն կարող է տեղի ունենալ ճանապարհների միջանցքում կամ դրան անմիջականորեն հարակից տարածքում, այն էլ մեծամասամբ շինարարության փուլում:

Լանդշաֆտի դեգրադացիա և հողի էրոզիա: Որոշ տարածքներ զգայուն են հողերի էրոզիայի նկատմամբ: Հետևաբար, ճանապարհի երկայնքով ձգվող առուների և թեքվածքների վերականգնման ընթացքում պետք է իրականացվեն հակա-էրոզիոն միջոցառումներ:

Աղտոտում շինարարական հրապարակներից եկող հոսքերով: Սարքավորումներից և պահեստավորված բիտումից արտահոսող նավթը, նավթամթերքները և քիմիական նյութերը կարող են ներթափանցել ստորգետնյա ջրերի մեջ կամ արտահոսել դեպի մակերևութային ջրհոսքեր:

Ծրագրի իրականացման տարածքի կենսաբազմազանության վրա ազդեցություններ: Շինարարական աշխատանքների ընթացքում վնաս կարող է հասցվել բուսական ծածկույթին, իսկ կենդանական աշխարհի համար լանդշաֆտը կարող է խախտվել ճանապարհին մոտ գտնվող այն հատվածներում, որտեղ կատարվում են հատումներ և ճանապարհային պատվածքի

աշխատանքներ: Հողահանումը, տեղական շինանյութերի հանքահանումը և շինարարական աղբի կուտակման վայրերը կարող են ժամանակավոր բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա: Այդ աշխատանքների համար անհրաժեշտ տարածքը պետք է ընտրվի արդեն օգտագործված տարածքների շարքից, որպեսզի շինարարության և շահագործման ազդեցությունը հասցվի նվազագույնի:

Աղմուկի ու ցնցումների ազդեցությունը շինարարության ժամանակ և օդի ժամանակավոր աղտոտումը (փոշի) կապված են շինարարական նյութերի տեղափոխման և բեռնատարների տեղաշարժման հետ: Ճանապարհային շինարարության աշխատանքներից առաջացած փոշին և բիտումի ծուխը բացասական ազդեցություն են թողնում մթնոլորտի/օդի որակի վրա, և հետևաբար անհրաժեշտ է արդյունավետ միջացառումներ ձեռնարկել այդ բացասական ազդեցությունը, հատկապես բնակավայրերում և պահպանվող տարածքներում, նվազագույնին հասցնելու համար: Նախքան վերականգնման աշխատանքներին մասնակցելու թույլտվություն ստանալը, բոլոր ասֆալտի գործարանները պետք է հավաստագրվեն և ստուգվեն ՀՀ նորմերին համապատասխան: Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքը (ընդունվել է 1994թ. և փոփոխությունների է ենթարկվել 08.05.2001թ., 01.01.2006թ. և 05.05.2007թ.) և արտանետումների արտոնագրերի, մթնոլորտը աղտոտող վտանգավոր նյութերի արտանետումների առավելագույն թույլատրելի նորմերի վերաբերյալ Կառավարության 30.03.1999թ. No 192 որոշումը առնչվում են այս խնդիրների հետ: Եթե օգտագործվում են ասֆալտի շարժական գործարաններ, ապա դրանց ոչ ճիշտ կառավարումը կարող է բացասական ազդեցություն ունենալ ջրի, ստորգետնյա ջրերի և մթնոլորտի վրա: Պետք է խուսափել նման ասֆալտի գործարանների օգտագործումից:

Փորված նյութերի և շինաղբի հեռացում: Ճանապարհների վերանորոգման և շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ հնարավոր է շինարարական աղբի առաջացում: Այս ազդեցությունները լինելու են տեղայնացված և կմեղմացվեն աղբի հեռացման և թափման համապատասխան գործողությունների արդյունքում, որոնք կարող են ներառել, սակայն չսահմանափակվել թափոնների ժամանակավոր կուտակման վայրերի պատշաճ ընտրությամբ, այս վայրերի սահմանների հստակ ուրվագծմամբ՝ դրանց ընդարձակումից խուսափելու նպատակով, նման վայրերից արտահոսքը կանխարգելելով, աղբաթափման վայրի վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմիններից գրավոր համաձայնության ձեռքբերմամբ, թափոնները աղբաթափման վայր պատշաճ ժամանակին տեղափոխմամբ:

Շինարարական աշխատանքների ընթացքում անվտանգության կանոնների ոչ ճիշտ պահպանման վտանգներ: Ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքների կատարման ժամանակ լուրջ վտանգներ չեն սպասվում, քանի դեռ պահպանվում են շինարարական աշխատանքների կատարման և անվտանգության ապահովման պատշաճ կանոնները:

Վերակառուցված ճանապարհի շահագործման փուլում բացասական ազդեցություն կարող է առաջանալ երթևեկության արագության աճի արդյունքում: Արագության աճը և ճանապարհային երևելության ծավալների աճը կարող են նպաստել ճանապարհատրանսպորտային պատահարների քանակի ավելացմանը: Որոշակի չափով նման հետևանքները կարելի է կանխել անվտանգության համապատասխան միջոցառումների կիրառմամբ (արագությունը նվազեցնող պատնեշներ և այլն):

Բնակչության վրա ազդեցությունը: Բնակչության և զբաղվածության վրա ունեցած ազդեցությունը հիմնականում դրական է: Ճանապարհների վերականգնումը որոշակի ազդեցություն կթողնի այն վայրերի աշխատուժի ժողովրդագրական կառուցվածքի վրա, որտեղ կատարվում է ճանապարհի բարելավումը: Դա հնարավորություն կտա երիտասարդներին մնալ գյուղում և աշխատանքի անցնել: Վերականգնված ճանապարհների շնորհիվ կաճի տեղական մթերքների մուտքը դեպի շուկաներ, ինչը կնպաստի գյուղատնտեսական սեկտորի, զբոսաշրջիկության և որոշ դեպքերում՝ տեղական արդյունաբերության զարգացմանը: Բացի այդ բարելավված ճանապարհները նոր աշխատատեղերի բացման հնարավորություններ կստեղծեն: Տնտեսության զարգացման շնորհիվ կավելանան ներդրումները հանրագուտ օբյեկտների, էներգետիկայի, հեռահաղորդակցման, կրթության, հանրային առողջության, մշակույթի, ժամանցի և այլ բնագավառներում: Վերականգնված ճանապարհների արդյունքում կնվազեն նաև տրանսպորտային միջոցների շահագործման ծախսերը, որը նույնպես դրական ազդեցություն կունենա մեքենաների սեփականատերերի մասնավոր տնտեսության վրա: Բացասական ազդեցությունը կարող է ավելանալ ճանապարհատրանսպորտային պատահարների թվի աճի հետ, որոնց պատճառ կարող է հանդիսանալ վերականգնված ճանապարհով վրա երթևեկության արագության աճը:

Վերաբնակեցում / հողի առգրավում / փոխհատուցում: Ծրագրի իրականացման ընթացքում չի ակնկալվում վերաբնակեցում, քանի որ նախատեսված աշխատանքները ներառելու են արդեն իսկ գոյություն ունեցող ենթակառուցվածքների վերականգնումը: Ժամանակավոր շրջանցումների կարիք չի առաջանա:

Ազդեցություններ պատմամշակութային և հնէաբանական հուշարձանների վրա: Ծրագրի իրականացման ընթացքում չեն ակնկալվում որևէ ազդեցություններ պատմամշակութային և հնէաբանական հուշարձանների վրա, քանի որ աշխատանքների մեծամասնությունը կրելու է գործող կառույցների վերականգնման բնույթ և իրականացվելու է այնպիսի տեղանքներում, որտեղ նախկինում կատարվել են նմանատիպ աշխատանքներ և հուշարձաններ չեն բացահայտվել:

Ծրագրի իրականացման արդյունքում սպասվող դրական ազդեցությունների շարքում կարելի է նշել՝ հուսալի կապի ապահովումը,

ուղևորների և բեռների արագ և ապահով տեղափոխումը, շահագործման և պահպանման ծախսերի զգալի նվազումը, նոր աշխատատեղերի ստեղծումը, գյուղական բնակավայրերից միգրացիայի կրճատումը և այլն:

ՄԵՂԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Մեղմացման միջոցառումները, որոնք կարող են կիրառվել համապատասխան վայրերում (կախված ճանապարհի տեսակից, երթևեկության ծավալից ու տեսակից, ճանապարհի մերձակայքից և այլն), առանձին-առանձին սահմանված են նախագծման, շինարարության և շահագործման փուլերի համար: Համապատասխան միջոցառումները մանրամասն քննարկվեն յուրաքանչյուր ճանապարհահատվածի համար մշակվելիք Բնապահպանական կառավարման պլաններում:

Նախագծման փուլ

Ճանապարհատրանսպորտային պատահարների քանակը և ուժգնության աստիճանը կարելի է նվազեցնել՝ վտանգավոր հատվածներում տեղադրելով բաժանիչ արգելապատեր, երթևեկությունը հանդարտեցնող սարքավորումներ, ոլորաններում՝ ուղղորդ սյուներ, երթևեկության նոր նշաններ և կատարելով ճանապարհային նշագծումներ: Որոշ վայրերում պետք է դիտարկվի նաև գառիթափերի / թեք լանջերի ամրացում գաբիոնների միջոցով:

Շինարարության փուլ

Նախքան շինարարական աշխատանքները սկսելը պետք է մշակվի և հաստատվի երթևեկության կառավարման պլանը, որը կապահովի երթևեկության հանգիստ հոսքը և բանվորների ու ընթացիկ երթևեկության անվտանգությունը: Հենց շինարարության փուլի ընթացքում է առաջ գալիս բնապահպանական խնդիրների մեծ մասը: Դրանք ներառում են առբերման ճանապարհներ, նավթամթերքի ու քիմիական նյութերի պահեստների կառուցման նպատակով բուսականությունից տեղանքի մաքրումը և փորումը, աշխատանքների ժամանակ տարածվող փոշին և աղմուկը և այլն: Լանդշաֆտի դեգրադացիան և հողի էրոզիան, ինչպես նաև փորված նյութերի և շինարարական թափոնների հեռացումից առաջացած աղտոտումը հնարավորինս նվազեցնելու նպատակով լրացուցիչ նյութերի արդյունահանման նպատակով պետք է օգտագործել գործող հանքերը: Հնարավորության դեպքում պետք է ապահովել փորված գրունտի կրկնակի օգտագործումը, ինչը թույլ կտա նվազեցնել նոր հանքերի բացման անհրաժեշտությունը: Շինարարական հրապարակները պետք է հստակ ուրվագծել և խստիվ վերահսկել՝ խուսափելով տարածքների անտեղի ընդարձակումից շինարարության ընթացքում: Դպրոցներին մոտ ընկած ճանապարհային հատվածներում և այն վայրերում, որտեղ շատ են ճանապարհից օգտվողները, պետք է տեղադրվեն պաշտպանական ցանկապատեր: Ծանապարհների վրա աշխատող բանվորները պետք է ունենան և կրեն անվտանգությունն ապահովող հանդերձանք՝ իրենց անձնական պաշտպանության համար: Շինարարական տեղամասից առաջացած փոշին և

աղմուկը նույնպես պետք է հասցվի նվազագույնի, մասնավորապես բնակելի վայրերի մոտակայքում: Շինարարական աղբը/ թափոնները և ավելցուկային նյութերը պետք է տեղափոխվեն և թափվեն այդ նպատակով հատուկ նախատեսված և համաձայնեցված աղբաթափման վայրերում:

Շինարարական և վերականգնողական աշխատանքների ավարտից հետո պետք է վերականգնել տեղանքի նախկին տեսքը:

Շահագործման փուլ

Շահագործման փուլում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել տրանսպորտային միջոցների տեխնիկական ստուգման վրա՝ երթևեկությունից շրջակա միջավայրի վրա թողած բացասական ազդեցությունը նվազագույնին հասցնելու համար: Զրահեռացման համակարգը պետք է պարբերաբար սպասարկվի՝ համակարգի պատշաճ աշխատանքը ապահովելու նպատակով և ջրհեղեղների ու սառույցի ազդեցության տակ ճանապարհային կառույցի վնասման պատճառները կանխելու համար:

ԲԿՊ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Առաջարկված մեղմացման միջոցառումների իրականացման ծախսերը փոքր են և դրանք դժվար է առանձնացնել շինարարական գործողությունների գներից: Այսպիսով, բնապահպանական լավ փորձին և ԲԿՊ-ների պահանջներին համապատասխանության ապահովման համար ծախսերը նախատեսվում են երառել շինարարական տարբեր աշխատանքների գներում:

ԲԿՊ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄ

Տրանսպորտի ԾԻԳ-ը, որպես շինարարական աշխատանքների պատվիրատու, պատասխանատու կլինի շինարար կապալառուի գործունեության՝ պայմագրի պահանջներին համապատասխանության ապահովման համար, ներառյալ ԲԿՊ-ի պահանջները:

Աշխատանքների տեխնիկական վերահսկողի կողմից գանցված ԲԿՊ-ի խախտումների դեպքում, շինարար կապալառուին կտրվի ծանուցում՝ 48 ժամյա ժամանակահատված՝ խնդիրը վերացնելու և շրջակա միջավայրի վիճակը վերականգնելու նպատակով: Եթե վերականգնման գործընթացը սկսվել է, սակայն այն հնարավոր չէ ավարտել 48 ժամյա ժամանակահատվածում, պատվիրատուն, խորհրդակցելով կապալառուի հետ, պետք է որոշի վերականգնման կատարման համար պահանջվող խելամիտ ժամանակահատվածը: Եթե 48 ժամվա ընթացքում, ըստ պատվիրատուի գնահատականի, կապալառուն որևէ գործողություն չի ձեռնարկել կամ էլ վարականգնումը չի իրականացվել պատշաճ ձևով, ապա պատվիրատուն իրավասու է ներգրավելու այլ կազմակերպություններ աշխատանքները իրականացնելու համար և վճարելու այդ կազմակերպություններին: Կապալառուն

պետք է վճարի պատվիրատուի բոլոր ծախսերը, որոնք այն կրել է խնդիրը լուծելու նպատակով:

ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ստորև բերվում են շրջակա միջավայրին առնչվող ՀՀ օրենքները և միջազգային համաձայնագրերը, որոնք կարգավորում են հասարակական խորհրդակցությունների և համակարգման, ինչպես նաև հասարակությանը տեղեկատվություն տրամադրելու խնդիրը՝

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին օրենքը (1995) ապահովում է քաղաքացիների իրավունքը պահանջելու տեղեկատվություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող գործունեության վերաբերյալ,
- «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության, որոշումներն ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրիուս, 1998, Հայաստանի Հանրապետությունը միացել է Կոնվենցիային 2001թ. մայիսի 14-ին):

ԿՆՃԲ ծրագրի ԲԿՇՓ-ի վերջնական նախագծը հրապարակվել է հանրապետությունում հայերեն և անգլերեն լեզուներով: Պետական մարմինների, մասնագիտական կազմակերպությունների, շահառու կողմերի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկումը կայացել է 2012թ. սեպտեմբերի 20-ին: Խորհրդակցական հանդիպման ընթացքում ներկայացված դիտողությունները և առաջարկությունները Խորհրդակցական հանդիպման ընթացքում բարձրացված հարցերին տրվել են համապարփակ ու մասնագիտական պատասխաններ: Խորհրդակցական հանդիպման արձանագրությունը (ներառյալ հարցերը և դրանց տրված պատասխանները) կցված են սույն ԲԿՇՓ-ին: ԿՆՃԲ ծրագրում ներառված ճանապարհահատվածների ԲԿՊ-ները կներկայացվեն հանրությանը և ծրագրի իրականացման հետ կապված բնապահպանական և սոցիալական խնդիրները կքննարկվեն ծրագրի հնարավոր շահառուների հետ մինչև շինարարական աշխատանքների իրականացումը յուրաքանչյուր հատվածի վրա:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆՆԵՐ

Սահմանափակ ռիսկայնությամբ շինարարական ծրագրերի համար՝ ինչպիսիք են ճանապարհների վերականգնման փոքրածավալ աշխատանքները, Համաշխարհային բանկի անվտանգության խումբը մշակել է ստուգաթերթիկի տեսքով ԲԿՊ-ի ձևաչափ, որը հնարավորություն է տալիս երաշխավորելու լավագույն փորձը ներկայացնող հիմնական միջոցառումները ընդունումը և կիրառումը: Միևնույն ժամանակ՝ այդ ձևաչափը և դյուրին է կիրառման համար, և համապատասխանում է ՀԲ անվտանգության պահանջներին:

Ստուգաթերթիկի ձևաչափով ԲԿՊ-ն անդրադառնում է տիպային մեղմացման միջոցառումներին, որոնք մշակված են փոքր, տեղայնացված, պարզ ու ոչ ռիսկային բնույթ ունեցող շինարարական աշխատանքների պայմանագրերի համար: Այս ձևաչափը ներկայացնում է ԲԿՊ-ի հիմնական տարրերը՝ Համաշխարհային բանկի ԳՔ 4.01-ի համաձայն Բ դասի ծրագրերի բնապահպանական գնահատման մինիմալ պահանջներին համապատասխանելու համար:

Սույն ԲԿՊ-ի ստուգաթերթիկը պարզ շինարարական աշխատանքների դեպքում հանդիսանում է գործնական, հստակ և իրատեսական ուղեցույց՝ կապալառուների և վերահսկող ճարտարագետների համար: Այն պետք է լրացվի վերջնական նախագծի ժամանակ՝ որպես առանձին փաստաթուղթ կամ էլ համալրի ազգային օրենսդրության շրջանակներում մշակված այլ բնապահպանական փաստաթղթերը, և հանդիսանա մրցութային փաթեթի և շինարարական աշխատանքների պայմանագրերի մաս:

ԲԿՊ-ի սուգաթերթիկը ներառում է հետևյալ մասերը.

Մաս 1 ներառում է նկարագրողական բաժինը, որը բնութագրում է ծրագիրը, ներկայացնում կառուցվածքային և կարգավորող դաշտը, տալիս ծրագրի տեխնիկական նկարագրությունը, ներկայացնում կարողությունների զարգացման անհրաժեշտությունը և հակիճ տեղեկություններ տալիս հանրային քննարկումների մասին: Այս մասի ծավալը կազմում է մինչև 2 էջ: Լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու անհրաժեշտության դեպքում կարող են նաև տրվել հավելվածներ:

Մաս 2 ներկայացնում է հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունները գնահատող ստուգաթերթիկը, որի միջոցով գործողությունները և հնարավոր բնապահպանական խնդիրները կարող են նշվել պարզ «Այո/Ոչ» ձևաչափով: Եթե որևէ գործողության / ազդեցության համար տրվել է «Այո» պատասխանը, ապա պետք է ներկայացվի հղում՝ Մաս Գ-ի աղյուսակի համապատասխան բաժնին, որը և ներառում է հստակ սահմանված բնապահպանական և սոցիալական կառավարման և մեղմացման միջոցառումները:

Մաս 3 ներկայացնում է բնապահպանական մեղմացման պլանը, որը հնարավորություն է տալիս պատշաճ կերպով հետևելու Մաս Բ-ում բերված գործողություններին: Այն ունի Բնապահպանական կառավարման պլանների համար պահանջվող ձևաչափ, որը մշակվել է Բ դասի ծրագրերի անվտանգության պահանջների համապատասխան:

Մաս 4 ներառում է պարզ մոնիտորինգի պլանը, որը հնարավորություն է տալիս թե կապալառուին և թե իշխանություններին և Համաշխարհային բանկի մասնագետներին իրականացնելու կառավարման և

պահպանության միջոցառումների մոնիտորինգ և ժամանակին բացահայտելու շեղումները և թերակատարումները:

Բ և Գ Մասերը կազմված են այնպես, որ ապահովեն հստակ և իրագործելի բնապահպանական և սոցիալական միջոցառումները, և ըմբռնելի լինեն նաև ոչ մասնագետների (օրինակ՝ կապալառուի տեղանքի ղեկավարների) համար, որոնք և կլրացնեն ու կիրականացնեն այն: ԲԿՊ-ն կներառվի մրցութային փաստաթղթերում և դրա իրականացման համար պահանջվող ծախսերը կգնահատվեն մրցույթի մասնակիցների կողմից: Դ Մասը նույնպես հատուկ մշակվել է պարզ տեսքով, ինչը հնարավորություն է տալիս իրականացնելու հիմնական ցուցաիշների մոնիտորինգը պարզ միջոցներով և ոչ մասնագիտացած անձնակազմով:

ԿՆՃԲ ծրագրում ներառված առանձին ճանապարհահատվածների ԲԿՊ-ի ստուգաթերթիկների ձևաչափը ներկայացված է Հավելված I-ում: Ծրագրի իրականացման ընթացքում ԲԿՊ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու համար մշակված Բնապահպանական վերահսկողության ստուգաթերթիկի ձևաչափը բերված է Հավելված II-ում: Հավելված III-ում ներկայացվում են կապալառուների համար բնապահպանական կառավարման ուղեցույցերը, որոնք ներառում են ճանապարհների կառուցմանն առնչվող բնապահպանական տեսանկյունից ընդունելի գործելակերպը: Աշխատանքների կատարումը այս ուղեցույցերի և մեղմացման պլանի պահանջներին համապատասխան կապահովի ծրագրի իրականացման ընթացքում բնապահպանական ազդեցությունների հնարավորինս փոքր և ընդունելի մակարդակը:

Հավելված I: Ճանապարհների փոքրածավալ շինարարության կամ վերականգնման համար մշակված Բնապահպանական կառավարման պլանի ստուգաթերթիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկատվություն ծրագրի և տեղանքի վերաբերյալ
2. Անվտանգության պահանջների ստուգում և գործարկում
3. Մեղմացնող միջոցառումներ
4. Մոնիտորինգի պլան

ՄԱՍ 1: Ընդհանուր տեղեկատվություն ծրագրի և տեղանքի վերաբերյալ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ & ՎԱՐՉԱԿԱՆ				
Երկիր				
Ծրագրի անվանումը				
Ծրագրի շրջանակը և գործունեությունը				
Կառուցվածքային կազմը (Անուն և կոնտակտային տվյալներ)	ՀԲ (Ծրագրի խմբի ղեկավար)	Ծրագրի կառավարում	Տեղական գործընկեր կամ շահառու	
Իրականացման կազմը (Անուն և կոնտակտային տվյալներ)	Անվտանգության վերահսկողություն	Տեղական գործընկերոջ վերահսկողություն	Տեղական տեսչության վերահսկողություն	Կապալառու
ՏԵՂԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ				
Տեղանքի անվանումը				
Տեղանքի գտնվելու վայրի նկարագրությունը	Հավելված 1: Տեղանքի քարտեզ [] Այո [] Ոչ			
Հողի սեփականատիրոջ անունը / անվանումը				
Աշխարհագրական, ֆիզիկական, կենսաբանական, երկրաբանական, հիդրոգրաֆիական և սոցիալ-տնտեսական պայմանների նկարագրությունը				
Նյութերի՝ մասնավորապես լցանյութերի, ջրի, քարերի, վերցման վայրը				
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ				
Ծրագրի գործողության համար կիրառվող ազգային օրենսդրությունը և թույլտվությունները				
ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ				
Ներկայացնել երբ / որտեղ են տեղի ունեցել հանրային խորհրդակցությունները				
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՁՈՐԱՑՈՒՄ				
Նախատեսվում է արդյոք կարողությունների հզորացում	[] Ոչ կամ [] Այո	Եթե այո, ապա Հավելված 2-ում ներկայացնել կարողությունների հզորացման ծրագիրը		

ՄԱՍ 2: ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՈՒՄ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ / ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ			
	Գործունեություն / Խնդիր	Կարգավիճակ	Գործարկված պահանջները
Արդյո՞ք տեղանքում գործունեությունը ներառում է հետևյալներից որևէ մեկը	Ա. Ճանապարհների վերականգնում	[] Այո [] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ա-ն ստորև
	Բ. Փոքրածավալ երթևեկության ենթակառուցվածքի նոր շինարարություն	[] Այո [] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ա-ն ստորև
	Գ. Մակերևութային ջրահեռացման համակարգի վրա ազդեցություններ	[] Այո [] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Բ-ն ստորև
	Դ. Պատմական շենքեր և շրջաններ	[] Այո [] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Գ-ն ստորև
	Ե. Հողի օտարում ¹	[] Այո [] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Դ-ն ստորև
	Զ. Վտանգավոր կամ թունավոր նյութեր ²	[] Այո [] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ե-ն ստորև
	Է. Ազդեցություններ անտառների կամ պահպանվող տարածքների վրա	[] Այո [] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Զ-ն ստորև
	Ը. Չփայթեցված զինամթերքի առկայության վտանգ	[] Այո [] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Է-ն ստորև
	Թ. Երթևեկության և հետիոտների անվտանգություն	[] Այո [] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ը-ն ստորև

¹ Հողի օտարումը ներառում է մարդկանց տեղահանումը, ապրուստի փոփոխությունը, մասնավոր սեփականություն մուտք գործելը, որը վերաբերում է գնված / փոխանցված հողին, ազդեցություն է թողնում օտարվող հողի վրա ապրող և/կամ ինքնակամ տեղավորված և/կամ գործունեություն վարող (օրինակ՝ տաղավար ու նեցող) մարդկանց վրա:

² Թունավոր / վտանգավոր նյութերը ներառում են, սակայն սահմանափակված չեն սաբեստով, թունավոր ներկերով, թունավոր լուծիչներով, կապար պարունակող ներկի հեռացմամբ և այլն:

ՄԱՍ 3: ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ՑՈՒՑԱՆԻՇ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՏՈՒԳԻՉ-ՑԱՆԿ
0. Ընդհանուր պայմաններ	Տեղեկությունների տրամադրում և աշխատողների անվտանգություն	<p>(ա) Տեղական շինարարական և բնապահպանական տեսչություններն ու համայնքները տեղեկացված են նախատեսվող միջոցառումների վերաբերյալ</p> <p>(բ) Հասարակությունը տեղեկացված է նախատեսվող աշխատանքների մասին լրատվամիջոցների օգնությամբ և/կամ հասարակական վայրերում՝ ներառյալ աշխատանքների կատարման վայրը)</p> <p>(գ) Ձեռք են բերվել շինարարական և/կամ վերականգնման աշխատանքների կատարման համար պահանջվող բոլոր թույլտվությունները</p> <p>(դ) Կապալառուն պաշտոնապես համաձայնում է, որ բոլոր աշխատանքները իրականացվեն պատշաճ կերպով, պահպանելով անվտանգության պահանջները՝ հարևան բնակիչների ու շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով</p> <p>(ե) Աշխատողների անհատական պաշտպանիչ արտահագուստը (ԱՊԱ) պետք է համապատասխանի միջազգային լավագույն փորձին (սաղավարտներ, անհրաժեշտության դեպքում դիմակներ և ակկոցներ, պաշտպանիչ բաճկոնակներ և կոշիկներ)</p> <p>(զ) Շինարարական հրապարակում համապատասխան տեղեկատվական ցուցանակների տեղադրումը հնարավորություն կտա տեղեկացնելու բանվորներին հիմնական կանոնների վերաբերյալ, որոնց անհրաժեշտ է հետևել աշխատանքներ իրականացնելիս</p>
Ա. Վերականգնման և / կամ շինարարական աշխատանքներ	Օդի որակ	<p>(ա) Փորման աշխատանքների իրականացման ժամանակ պետք է կիրառվեն փոշին նստեցնող միջոցառումներ, օրինակ՝ հողի վրա ջուր ցողալը և խոնավեցնելը</p> <p>(բ) Քանդված մնացորդները, փորված հողը և նյութերը պետք է պահվեն վերահսկվող տարածքում և դրանց վրա պետք է ջուր ցողալ՝ փոշին նստեցնելու նպատակով</p> <p>(գ) Պննմատիկ փորման կամ ծածկի ու հիմքերի քանդման ժամանակ, փոշին պետք է նստեցնել անընդհատ ջուր ցողալով և/կամ հրապարակում տեղադրելով փոշին նստեցնող ծածկոց</p> <p>(դ) Շրջակա միջավայրը (մայթերը, ճանապարհը) պետք է զերծ պահվի հողից և մնացորդներից՝ փոշու առաջացումը նվազեցնելու նպատակով</p> <p>(ե) Շինարարական հրապարակում շինարարական թափոնների բացօդյա այրումը չի թույլատրվում</p> <p>(զ) Բոլոր օգտագործվող մեքենաները պետք է համապատասխանեն արտանետումներին առնչվող տեղական օրենսդրությանը, և պետք է պատշաճ կերպով շահագործվեն և սպասարկվեն, հրապարակներում շինարարական տեխնիկան չպետք է պարապորդի մատնվի</p>
	Աղմուկ	<p>(ա) Շինարարության ընթացքում աղմուկի առաջացումը պետք է սահմանափակվի համաձայնագրում նշված ժամերով</p> <p>(բ) Աշխատանքի ընթացքում պետք է օգտագործվեն փակ/ծածկված գեներատորներ, օդի կոմպրեսորներ և այլ մեխանիկական սարքավորումներ, սարքավորումները պետք է տեղադրվեն բնակելի տարածքներից հնարավորիս հեռու</p>
	Ջրի որակ	<p>(ա) Հրապարակում պետք է իրականացվեն էրոզիայի և նստվածքների կարգավորման համապատասխան</p>

*Բնապահպանական կառավարման շրջանակային փաստաթուղթ
Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր*

	Թափոնների կառավարում	<p>միջոցառումներ, օրինակ՝ տեղադրվեն հարդի պարկեր և/կամ նստվածքի հեռացման ցանցեր՝ նստվածքների հրապարակից հեռացումը, և ջրահեռացման համակարգում ու մոտակա ջրիոսքերում և գետերում ավելցուկային տուրբուլենտությունը կանխելու նպատակով</p> <p>(ա) Աղբի հավաքումը, դրա հեռացման ուղիները և տեղադրման վայրերը պետք է հստակեցվեն աղբի հիմնական տեսակների համար, որոնք կառաջանան փորումից, քանդումից և շինարարական գործունեությունից</p> <p>(բ) Շինարարական և քանդման աշխատանքներից առաջացած հանքային թափոնները պետք է առանձնացվեն օրգանական, հեղուկ և քիմիական թափոններից՝ տեղանքում դրանց բաժանումը իրականացնելով և համապատասխան կոնտեյներներում պահելով,</p> <p>(գ) Շինարարական աղբը պետք է հավաքվի և տեղադրվի աղբավայրում՝ պատշաճ կերպով հավաստագրված հավաքողների կողմից</p> <p>(դ) Շինարարական աղբի հեռացման վերաբերյալ պետք է կատարվեն գրառումներ, ինչը հնարավորություն կտա երաշխավորելու պատշաճ կառավարումը</p> <p>(ե) Հնարավորության դեպքում կապալառու կիրականացնի պիտանի նյութերի վերամշակում և դրանց կրկնակի օգտագործում (ասբեստ պարունակող նյութերի բացառությամբ)</p>
Բ. Մակերևութային ջրահեռացման համակարգի վրա ազդեցություններ	Ջրի որակ	<p>(ա) Ստորերկրյա ջրերի չկառավարվող արդյունահանումը, օգտագործված ջրերի, ցեմենտային ջրերի կամ ցանկացած այլ կեղտաջրերի չկարգավորված հեռացումը դեպի հող կամ մոտակա ջրիոսքեր ու գետեր պետք է բացառվի: Կապալառու պետք է ձեռքբերի ջրի արդյունահանման և դեպի հանրային կյուրի կարգավորված ջրահեռացման համար բոլոր անհրաժեշտ հավաստագրերը և թույլտվությունները</p> <p>(բ) Պետք է տեղադրվի և շահագործվի անձրևաջրերի հեռացման պատշաճ համակարգ՝ թույլ չտալով նստվածքի կուտակումը, աղտոտումը, խցանումը կամ այլ բնական ջրահոսքերի, գետերի, լճակների և լճերի վրա շինարարական աշխատանքների արդյունքում այլ բացասական ազդեցությունը</p> <p>(գ) Վառելիքի, քայուղերի կամ այլ թունավոր և վտանգավոր նյութերի պատահական արտահոսքը կանխելու և դրա առաջացման դեպքում ճիշտ գործելու նպատակով, պետք է մշակվեն հատուկ կանոնակարգեր</p> <p>(դ) Շինարարական մեքենաները և սարքավորումը պետք է լվացվեն հատուկ այն նպատակով սահմանված վայրերում, որտեղից ջրի արտահոսքը չի առաջացնի մակերևութային բնական ջրերի աղտոտում</p>
Գ. Պատմական շինություններ	Մշակութային ժառանգություն	<p>(ա) Եթե շինարարական աշխատանքներն իրականացվում են պատմական շինության մոտակայքում կամ պատմական տարածքում, ցանուցում պետք է ուղարկվի և համաձայնություններ / թույլտվություններ ստացվեն տեղական իշխանություններից, և բոլոր շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն ազգային օրենսդրության պահանջների համաձայն</p> <p>(բ) Հողային կամ շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված պատահական գտածոները պետք է գրանցվեն, տեղեկատվությունը պետք է տրամադրվի պատասխանատու մարմիններին, աշխատանքները պետք է հետաձգվեն կամ դրանց կատարման վայրը փոփոխվի՝ գտածոների հետագան պարզելու նպատակով</p>
Դ. Հողի օտարում	Հողի օտարման պլան / շրջանակ	<p>(ա) Եթե հողի օտարում չէր ակնկալվում, սակայն պահանջվում է, կամ եթե օրինական և ոչ օրինական օգտագործողների եկամտի վրա ազդեցություն չէր ակնկալվում, սակայն կարող է առաջանալ, ապա Բանկի խմբի ղեկավարը պետք է անմիջապես տեղեկացվի:</p> <p>(բ) Հաստատված Հողի օտարման պլանը / շրջանակը (եթե այն պահանջվում է ծրագրի համար) պետք է իրականացվի</p>
Ե. Թունավոր նյութեր	Ասբեստի կառավարում	<p>(ա) Եթե ասբեստը տեղակայված է ծրագրի տարածքում, այն պետք է հստակ մակնշված լինի որպես վտանգավոր նյութ</p>

Բնապահպանական կառավարման շրջանակային փաստաթուղթ
Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր

		<p>(բ) Հնարավորության դեպքում արբեստը պետք է ծածկված լինի՝ դրա ազդեցությունը նվազեցնելու նպատակով</p> <p>(գ) Նախքան հեռացումը (եթե հեռացումն անհրաժեշտ է) արբեստը պետք է մշակվի խոնավ նյութով՝ փոշու առաջացումը նվազեցնելու նպատակով</p> <p>(դ) Արբեստը պետք է մշակվի և հեռացվի փորձառու և մասնագիտացած անձնակազմի կողմից</p> <p>(ե) Եթե արբեստ պարունակող նյութերը չեն կարող պահվել ժամանակավորապես, թափոնները պետք է պահվեն կոնտեյներների մեջ՝ համապատասխան մակնշումով: Անվտանգության միջոցառումներ պետք է իրականացվեն՝ հրապարակից դրանց չարտոնագրված հեռացումը բացառելու նպատակով</p> <p>(զ) Հեռացված արբեստի կրկնակի օգտագործումը չի թույլատրվում</p>
<p>2. Ազդեցություններ անտառների, գերխոնավ և/կամ պահպանվող տարածքների վրա</p>	<p>Էկոհամակարգի պահպանություն</p>	<p>(ա) Վտանգավոր և թունավոր նյութերի ժամանակավոր պահպանումը պետք է իրականացվի ապահով կոնտեյներներում՝ նշելով դրանց բաղադրության, հատկությունների և մշակման վերաբերյալ տեղեկությունները</p> <p>(բ) Վտանգավոր նյութեր պարունակող կոնտեյներները պետք է տեղադրվեն անջրաթափանց կոնտեյների վրա՝ արհատուքը բացառելու նպատակով</p> <p>(գ) Թափոնները պետք է տեղափոխվեն հատուկ հավաստագրված փոխադրողների կողմից և տեղադրվեն հավաստագրված վայրում</p> <p>(դ) Թունավոր բաղադրիչներ պարունակող ներկերի կամ լուծիչների կիրառումը չի թույլատրվում</p>
<p>Ե. Չփայթեցված գինամթերքի առկայության վտանգ</p>	<p>Մարդու առողջությանը և անվտանգությանը հասցվող վտանգ</p>	<p>(ա) Բոլոր ընդունված բնադրավայրերը, գերխոնավ և պահպանվող տարածքները, որոնք գտնվում են հրապարակի անմիջական մոտակայքում չպետք է վնասվեն կամ օգտագործվեն, աշխատակազմին պետք է խիստ արգելվի իրականացնել որս, խեստահավաք, ջրածածկում կամ այլ վնասակար գործողություններ</p> <p>(բ) Շինարարական հրապարակի մոտակայքում խոշոր ծառերը պետք է ուսումնասիրվեն և հաշվառվեն, խոշոր ծառերը պետք է մակնշվեն և ցանկապատվեն, արմատային համակարգը պետք է պաշտպանվի և ծառերին վնաս հասցնելը՝ բացառվի</p> <p>(գ) Հարակից գերխոնավ տարածքները և ջրահոսքերը պետք է պահպանվեն արտահոսքից՝ էրոզիան և նստվածքի առաջացումը կարգավորող համապատասխան միջոցառումների իրականացման միջոցով, որոնք ներառում են սակայն սահմանափակված չէն հարդի պարկերի և նստվածքների հեռացման ցանցերի տեղադրմամբ</p> <p>(դ) Չհավաստագրված հանքավայրերի, քարհանքերի, աղբավայրերի օգտագործումը չի թույլատրվում՝ հատկապես պահպանվող տարածքներում</p>
<p>Ը. Երթևեկության և հետիոտնի անվտանգություն</p>	<p>Շին. աշխատանքների իրականացման արդյունքում հանրային երթևեկությանը և հետիոտնին հասցված ուղղակի կամ անուղղակի վնաս</p>	<p>(ա) Համաձայն տեղական օրենսդրության՝ կապալառուն պետք է ապահովի շինարարական հրապարակի անվտանգությունը և երթևեկության կարգավորումը: Այս միջոցառումները ներառում են, սակայն չեն սահմանափակվում</p> <ul style="list-style-type: none"> □ ցուցապատատների, զգուշացնող նշանների, արգելափակողների տեղադրմամբ, երթևեկության շրջանցող ուղիների ապահովմամբ՝ շինարարական հրապարակը լավ տեսանելի դարձնելու և բնակչությանը հնարավոր վտանգների մասին զգուշացնելու նպատակով □ երթևեկության կառավարման համակարգի առկայությամբ և անձնակազմի ուսուցմամբ, հատկապես շինարարական տեղանք մուտք գործելու և հրապարակի մերձակայքում ցանրաբեռնված երթևեկության դեպքում

*Բնապահպանական կառավարման շրջանակային փաստաթուղթ
Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր*

		<ul style="list-style-type: none"> <input type="checkbox"/> Աշխատանքային ժամերի փոփոխմամբ՝ համապատասխանեցնելով դրանք տեղական երթևեկության առանձնահատկություններին, օրինակ՝ պիկային ժամերին կամ անասունների տեղաշարժի ժամերին փոխադրումների կատարումից խուսափելով <input type="checkbox"/> Անհրաժեշտության դեպքում՝ պատրաստված անձնակազմի կողմից երթևեկության կառավարման իրականացմամբ՝ հրապարակում մարդկանց անվտանգ տեղաշարժն ապահովելու նպատակով <input type="checkbox"/> Շինարարության ընթացքում գրասենյակային կառույցների, խանութների և բնաչիկների անվտանգ ու շարունակական հասանելիության ապահովմամբ
--	--	---

ՄԱՍ 4: ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Ո՞ր (ցուցանիշն է ենթակա մոնիտորինգի)	Որտե՞ղ (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Ինչպե՞ս (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Ե՞րբ (սահմանել հաճախականությունը / կամ անընդհատ)	Ինչո՞ւ (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Գինը (եթե ներառված չէ ծրագրի բյուջեում)	Ո՞վ (է պատասխանատու ցուցանիշի մոնիտորինգի համար)
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ						
1.						
2.						
3.						
...						
x.						
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ						
1.						
....						
y.						

Հավելված II: Բնապահպանական վերահսկողության ստուգաթերթիկ

Ընդհանուր տեղեկություններ	Օր / ամիս / տարի			
	Հաշվետվությունը ներկայացնողի անունը			
	Ճանապարհահատվածի անվանումը և տեղակայման վայրը			
	Կապալառուի / ենթակապալառուի անվանումը			
Թույլտվություններ, համաձայնություններ	Շինարարության ընթացքում նոր քարհանքի բացման համար թույլտվության ստավում	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	Շինարարական աղբի տեղադրման համաձայնության ստացում	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Շինարարական հրապարակների կառավարում	Շինարարական հրապարակի / ժամբարի պատշաճ տեղադրում	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	Վառելիքի, յուղերի և շինարարական նյութերի համար պատշաճ պահեստի առկայություն	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	Շինարարական մեքենաների և մեխանիզմների պատշաճ շահագործում (վառելիքի, յուղերի, քսայուղերի և այլնի արտահոսքի կանխում)	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	Գոյություն ունեցող օտարման գոտու սահմաններում փորված և քանդված նյութերի և շինարարական աղբի նախնական կուտակման վայրերի առկայություն	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	Փորված և քանդված նյութերի և շինարարական աղբի ժամանակին հեռացում նախնական կուտակման վայրերից և դրա տեղադրումը նախատեսված և համաձայնեցված վայրերում	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	Օգտագործել ծածկով մեքենաներ շինարարական նյութերի և աղբի տեղափոխման համար	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	Մաքրել շրջակա տարածքը փոշուց ջուր ցողալով շինարարական գոտում (անհրաժեշտության դեպքում)	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	Մաքրել / լվանալ մեքենաների անվադողերը մինչև դրանց բնակավայր և/կամ մայրուղի դուրս գալը (անհրաժեշտության դեպքում)	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	Աշխատանքների իրականացումը սահմանված ժամանակահատվածում (օրինակ՝ աշխատանքների իրականացում ցերեկային ժամերին)	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	Շինարարական հրապարակներում և մոտեցնող ճանապարհների երկայնքով ճանապարհային նշանների տեղադրում	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

Բնապահպանական կառավարման շրջանակային փաստաթուղթ
Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր

	Ապահովել պատշաճ սանիտարական / հիգիենիկ պայմանները շինարարական հրապարակում աշխատող բանվորների համար	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> Ո/Կ
	Շինարարական հրապարակների և ճամբարների տարածքի բարեկարգում՝ շինարարական աշխատանքների ավարից հետո	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> Ո/Կ
Անվտանգության միջոցառումներ	Բանվորներին տրամադրվել է նրանք օգտագործում են անհրաժեշտ պաշտպանիչ արտահագուստ (օրինակ՝ բաճկոնակներ, սաղավարտներ, երկարաճիտ կոշիկներ, ձեռնոցներ, ակնոցներ և այլն)	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> Ո/Կ
	Շինարարական հրապարակներում / ճամբարներում հրդեհի մարման միջոցների առկայությունը (հակահրդեհային վահան, կրակմարիչ, ավազ և այլն)	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> Ո/Կ

Հավելված III: Բնապահպանական կառավարման ուղեցույցեր կապալառուների համար

Ճանապարհներ և մայթեր

Վերականգնման աշխատանքների իրականացման համար հնարավոր է պահանջվի որոշակի ճանապարհների և մայթերի փակման կամ շրջանցման մշտական կամ ժամանակավոր անհրաժեշտություն՝ շինարարության փուլում: Կապալառուն պարտավոր է ապահովել շրջանցումը և այլընտրանքային անցուղի կազմակերպել տրանսպորտային միջոցների և/կամ հետիոտնի համար:

Հանրամատչելի ճանապարհի փակման, շարժման դադարեցման և այլ խոչընդոտների դեպքում Կապալառուն պետք է գործնական միջոցներ ձեռնարկի շինարարական և վերականգնման աշխատանքների իրականացման ընթացքում այդ ճանապարհում/մայթում անցուդարձը հնարավորինս քիչ սահմանափակելու ուղղությամբ:

Այն դեպքերում երբ վերականգնման աշխատանքները կատարվում են գոյություն ունեցող հանրային կամ մասնավոր սեփականություն հանդիսացող ճանապարհների վրա, Կապալառուն, հնարավորության դեպքում, պարտավոր է կազմակերպել շրջանցող ճանապարհներ: Շինարարության և լուսավորման ստանդարտները պետք է համապատասխան լինեն այդ ճանապարհներով երթևեկող տրանսպորտային բոլոր միջոցների համար, և որտեղ հնարավոր է շրջանցման ճանապարհի լայնությունը չպետք է լինի գոյություն ունեցող ճանապարհի լայնությունից փոքր: Շրջանվող ճանապարհները պետք է կազմակերպվեն մինչև գոյություն ունեցող ճանապարհների վրա աշխատանքների իրականացումը և պետք է պատշաճ շահագործվեն՝ երթևեկության սահուն հոսքն ապահովելու նպատակով:

Կապալառուն պարտավոր է ստանալ բոլոր անհրաժեշտ իրավական փաստաթղթերը և փակցնել հանրության իրազեկման հայտարարությունները:

Բեռնատարների և շինարարական տեխնիկայի շարժումը

Պինդ կամ հեղուկ շինարարական նյութերի կամ թափոնների տեղափոխման ժամանակ Կապալառուն պետք է ձեռնարկի միջոցառումներ՝ դրանց արտահոսքը դեպի ճանապարհ նվազագույնի հասցնելու ուղղությամբ: Այս նպատակով բեռնատարները պետք է բեռնվեն այնպես, որ բացառվի շինարարական նյութերի թափումը կամ հեղուկների արտահոսքը գրունտ, ավազ, շինարարական նյութեր, և թափոններ տեղափոխելու համար օգտագործելով փակ կողքերով և վրաձածկով բեռնատարներ:

Կապալառուն պարտավոր է ձեռնարկել բոլոր պահանջվող միջոցառումները՝ խուսափելու համար բեռնատարների կայանումից ճանապարհների վրա՝ մինչև շինարարական հրապարակ մուտք գործելը:

Երևելության անվտանգության ապահովման միջոցառումներ

Կապալառուն պարտավոր է ապահովել երթևեկության կարգավորման նշանների, ճանապարհի նշագծման, լույսերի, կողնակների և նախազգուշացնող նշանների տեղադրումը և ձեռնարկել այլ միջոցառումներ, շինարարության իրականացման վայրում երթևեկության անվտանգությունն ապահովելու նպատակով: Կապալառուն չպետք է սկսի որևէ աշխատանք հանրային ճանապարհի կամ մայրուղու վրա, քաղի դեռ երթևեկության անվտանգության ապահովման բոլոր միջոցառումները ձեռնարկված և պատշաճ իրակացված չեն:

Շինարարական հրապարակում և դրա հարակից վայրերում անցուդարձը

Վերականգնման աշխատանքների իրականացման ժամանակ կապալառուն պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ մոտակա հողատարածքների և կառույցների սեփականատերերին, վարձակալներին կամ օգտագործողներին և ընդհանուր առմամբ հանրությանը անհանգստության կամ անհարմարության պատճառումը բացառելու կամ նվազեցնելու համար: Կապալառուն պետք է պահպանի գոյություն ունեցող օտարման գոտին վերականգնման աշխատանքների իրականացման հատվածի որջ երկայնքով և ապահովի հանրության անցուդարձի անվտանգությունը՝ առնվազն այնպես, ինչպես դա ապահովված էր մինչև շինարարական աշխատանքների սկիզբը: Անհրաժեշտության դեպքում Կապալառուն պետք է ապահովի ազդակիր հանրության պատշաճ անցուդարձի ընդունելի այլընտրաքային եղանակ:

Գոյություն ունեցող կառույցների պահպանումը

Շինարարության իրականացման ժամանակ Կապալառուն պարտավոր է ապահովել բոլոր շինությունների, կառույցների, ենթակառուցվածքների և կառուցվածքների պահպանումը վնասումից, խախտումից կամ քայքայումից: Կապալառուն պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցառումները շինությունների, կառույցների, խողովակների, մալուխների, ջրահեռացման համարագերի, երկաթգծի, և այլն սարքավորումների պահպանումը ապահովելու համար:

Գոյություն ունեցող կառույցների օգտագործումը

Կապալառուն չպետք է տեղադրի նյութերի կույտեր, գործարան կամ այլ ժամանակավոր կառույցներ այլ կառուցվածքների, օրինակ՝ կամուրջների, վիադուկների, ջրատարների/ջրանցքների շահագործման ճանապարհների, պատերի, պատվարների վրա և դրանց անմիջական մոտակայքում՝ այդ կառույցվածքներին վնասի պատճառումը բացառելու նպատակով:

Աղմուկի և փոշու վերահսկումը

Կապալառուն պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները ճանապարհների վերականգնվող հատվածներում՝ փոշու և աղմուկի ազդեցությունը նվազեցնելու նպատակով, ներառյալ.

- բնակելի տարածքների մոտակայքում ընդունված աշխատանքային ժամերի պահպանումը,

- սարքավորման սարքինության ապահովումը՝ աղմուկը, մեխանիկական վիբրացիան, ինչպես նաև մեքենա-մեխանիզմներից ծխի արտանետումները նվազեցնելու համար,
- չօգտագործվող սարքավորման աշխատանքի դադարեցումը:

Ջրամատակարարման անհամաձայնություններ

Կապալառուն պարտավոր է ապահովել իր անձնակազմի պատշաճ ջրամատակարարումը, որը չի խոչընդոտի տեղական բնակչությանը ծառայությունների մատուցման գործընթացին: Եթե առկա է ջրային ռեսուրսների սահմանափակությամբ պայմանավորված մրցակցության ռիսկ, Կապալառուն պետք է երաշխավորի տեղական ջրամատակարարման անխափանությունը և, անհրաժեշտության դեպքում, ապահովի իր անձնակազմի համար ջրի այլընտրանքային աղբյուրի առկայությունը (օրինակ՝ գլանատակառններում ջրի պահում):

Թափոնների հեռացում

Կապալառու պետք է համաձայնություն ձեռք բերի Պատվիրատու համայնքի ղեկավարից՝ շինարարական աղբի թափման համար: Համայնքը պետք է տրամադրի աղբավայր պինդ թափոնների հեռացման նպատակով: Վտանգավոր թափոնների հեռացման անհրաժեշտության դեպքում կապալառուն պարտավոր է տեղեկացնի Պատվիրատու համայնքի ղեկավարությանը և հետևել նման աղբի հեռացման նպատակով Պատվիրատուի տրված ուղեղույցերին:

Հողի պահպանություն

Կապալառուն պարտավոր է ձեռնարկել բալար անհրաժեշտ միջոցատումները հողի դեգրադացման և էրոզիայի առաջացումից խուսափելու բնապակով: Ծանր տեխնիկայի օգտագործումը պետք է հնարավորինս սահմանափակվի՝ հողի պնդեցումից խուսափելու նպատակով: Հողի էրոզիան և թեք լանջերի անկայունությունը պետք է վերացվի բլուրների տերասավորմամբ, ծառատունկի իրականացմամբ կառուցմամբ:

Ծառերի և այլ բուսականության պահպանություն

Կապալառուն հնարավորինս պետք է խուսափի ծառահատումից կամ բուսածածկը վնասելուց: Բուսածածկի վրա անբարենպաստ ազդեցությունները վերականգնվող հատվածներում պետք է նվազագույնի հասցվի ծրագծերի, շինարարական նյութերի կուտակման վայրերի, շինարարական ծանր տեխնիկայի կայանատեղիների պատշաճ ընտրությամբ:

Արտակարգ իրավիճակներում ահազանգումը և գործընթացները

Կապալառուն յուրաքանչյուր շինարարական հրապարակի համար պետք է մշակի և թարմացնի արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում ահազանգման համար անհրաժեշտ տեղեկատվությունը և փակցնի այն աշխատակազմի համար տեսանելի վայրում: Ահազանգման տեղեկատվությունը պետք է ներառի հեռախոսահամարներ, հրդեհի, առողջության հետ կապված

խնդիրների, անսարքության, վտանգավոր նյութերի արտահոսքի դեպքերում պատասխանատու տեղական իշխանությունների / ծառայությունների տեղեկացման եղականը:

Աշխատանքների ավարտից հետո շինարարական հրապարակի վերականգնում

Կապալառուն պետք է բարեկարգի բոլոր շինարարական հրապարակները, որոնք տեղակայված են վերականգնման ենթակա հատվածի ներսում և դրսում, ինչպես նաև մոտեցնող ճանապարհների վայրերում՝ դրանց վրա աշխատանքների ավարտից հետո: Ավելցուկային հողը և նյութերը, ժամանակավոր ճանապարհները, բուսածածկը, ճամբարը, ժամանակավոր ցանկապատերը պետք է հեռացվեն, փոսերը՝ լցվեն, հողի մակերևույթը՝ հարթեցվի և վերականգնվի ընդհուպ մինչև նախնական իրավիճակ:

Հավելված IV: Հանրային խորհրդակցության արձանագրություն

**Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագրի
Բնապահպանական կառավարման շրջանակային աստաթղթի և
Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթղթի
Վերաբերյալ հանրային խորհրդակցության արձանագրություն**

Ամսաթիվը՝ 20 սեպտեմբերի 2012թ.

Վայրը՝ Տրանսպորտի և կապի նախարարություն, Երևան, Նալբանդյան 28

Հանդիպումը սկսվեց ժամը 11:00-ին:

Ընդհանուր առմամբ 18 մասնակից ներկա գտնվեց քննարկմանը, ներառյալ Տրանսպորտի և կապի նախարարության, Պետական փորձաքննության, Տրանսպորտի ԾԻԳ-ի, Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի, ՀՄՀ-Հայաստան ծրագրի, USAID EDMC, Kocks Consult, տեղական նախագծային աշխատանքներ և վերահսկողություն իրականացնող կազմակերպությունների, ճանապարհների շինարարություն և շահագործում իրականացնող ընկերությունների, շահառու համայնքների ներկայացուցիչներին: Հանրային խորհրդակցության մասնակիցները գրանցվեցին մասնակիցների ցանկում և տրամադրեցին իրենց կոնտակտային տվյալները (հավելված I): Հանրային խորհրդակցության ընթացքում կատարված լուսանկարները ներկայացված են հավելված II-ում:

Տրանսպորտի ԾԻԳ-ի տնօրեն Ա. Բախտամյանը բացեց հանդիպումը, տեղեկացրեց հանրային խորհրդակցության նպատակների մասին և հակիրճ ներկայացրեց Կենսական ճանապարհացանցի բարելավման ծրագրի մշակման և իրականացման մանրամասները: Նա մատնանշեց ծրագրի նախապատրաստման փուլում իրականացվող բնապահպանական և սոցիալական վերլուծությունների կարևորությունը: Ա. Բախտամյանը նշեց նաև, որ քննարկման ներկայացվող փաստաթղթերը տեղադրվելու են նաև Տրանսպորտի և կապի նախարարության ինտերնետային կայքում և ցանկության դեպքում տպված տարբերակով կարող են վերցվել Տրանսպորտի ԾԻԳ-ից: Հանրային խորհրդակցությունների վերաբերյալ հայտարարությունը տպագրվել է տեղական թերթում և Տրանսպորտի և կապի նախարարության ինտերնետային կայքում: Տրանսպորտի ԾԻԳ-ի տնօրենի տեղակալ Կ. Բադալյանը ողջունեց մասնակիցներին և ներկայացրեց հակիրճ տեղեկատվություն Կենսական ճանապարհացանցի բարելավման ծրագրի մասին, ներառյալ ծրագրի առաջին տարվա ընթացքում նախատեսված աշխատանքները:

Բացման խոսքից հետո Տրանսպորտի ԾԻԳ-ի բնապահպանական և սոցիալական մասնագետ Արմինե Սիմոնյանը ներկայացրեց Կենսական ճանապարհացանցի բարելավման ծրագրի համար մշակված Բնապահպանական

կառավարման շրջանակային փաստաթուղթը և Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթուղթը:

Բնապահպանական կառավարման շրջանակային փաստաթղթի (ԲԿՇՓ) ներկայացումը ներառում էր ԲԿՇՓ մշակման գործընթացը, դրա նպատակները և այն մոտեցումները, որոնք ներառված են փաստաթղթում: Տեղեկատվություն ներկայացվեց նաև Համաշխարհային բանկի անվտանգության քաղաքականությունների, յուրաքանչյուր քաղաքականության կիրառումը հարուցող գործոնների, Հայաստանի Հանրապետության առնչվող օրենսդրության վերաբերյալ և այն մարմինների մասին, որոնք կարող են ներգրավված լինել ընթացիկ ծրագրում: Ներկայացվեցին տեղական ճանապարհահատվածների վրա իրականացվելիք վերականգնման աշխատանքների հետ կապված հնարավոր բնապահպանական ազդեցությունները, ինչպես նաև ազդեցությունները մեղմացնող կամ նվազեցնող հիմնական մեղմացման միջոցառումները: Ներկայացման ավարտին տեղեկություններ տրվեցին ծրագրի առաջին տարվա աշխատանքներում ներառված յոթ ճանապարհահատվածների համար մշակված Բնապահպանական կառավարման պլանների մասին:

Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթղթի (ՎԲՇՓ) ներկայացումը ներառում էր ԲԿՇՓ մշակման գործընթացը, դրա նպատակները և այն մոտեցումները, որոնք ներառված են փաստաթղթում: Տեղեկատվություն ներկայացվեց Համաշխարհային բանկի Ոչ կամավոր վերաբնակեցման Գործառնական քաղաքականության, Հայաստանի Հանրապետության առնչվող օրենսդրության, առկա բացերի և այդ բացերը լրացնելու համար առաջարկված մոտեցումների, իրավունակության և ծրագրի համար կիրառվելիք փոխհատուցման մեխանիզմի, ինչպես նաև հողի առգրավման / վերաբնակեցման հետ կապված փաստաթղթերի մշակման, վերանայման, հաստատման և իրականացման գործում ներգրավված հիմնական մարմիններին վերաբերյալ: Ներկայացվեցին նաև վերաբնակեցման գործողությունների պլանի մշակման քայլերը, մոնիտորինգի և բողոքների լուծման մոտեցումները: Առանձնահատուկ նշվեց նաև, որ ծրագրի շրջանակներում նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում, և գոյություն ունեցող հատվածների վրա իրականացվելու են միայն վերականգնողական աշխատանքներ: Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը, նշվեց, որ թեև ԿՆՃԲ ծրագրի շրջանակներում վերաբնակեցում չի ակնկալվում, այնուամենայնիվ մշակվել է ՎԲՇՓ-ն, որը կնահղիսանա ուղղորդող փաստաթուղթ՝ ծրագրի իրականացման ընթացքում ցանկացած ճանապարհահատվածի հետ կապված հողի առգրավման / վերաբնակեցման անհրաժեշտության դեպքում:

Այնուհետև, մասնակիցներին հնարավորություն տրվեց ներկայացնել հարցերը և ստանալ պատասխաններ: Խորհրդակցության ընթացքում բարձրացված հիմնական հարցերն ու տրված պատասխանները հակիրճ կեպրով ամփոփված են ստորև:

Հարց 1

Եթե ծրագրի իրականացման ընթացքում պահանջվի ենթակառուցվածքների տեղափոխում, ինչպե՞ս է այն իրականավելու: Ինչպե՞ս է փոխհատուցվելու ծառերի հատումը, եթե այն պահանջվի:

Պատասխան

Կ. Բաղայանը պարզաբանեց ենթակառուցվածքների տեղափոխման հետ կապված հարցը և նշեց, որ տեղափոխումը ներառվելու է նախագծում և իրականացվելու է համապատասխան ենթակառուցվածի կառավարմա համար պատասխանատու կազմակերպության կողմից (օրինակ՝ Հայջրմուղկոյուղին ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքի մասով, Հայաստանի էլեկտրացանցերը հոսանքատար մալուխների մասով և այլն): Նա նույնպես նշեց, որ եթե տեղափոխվող ենթակառուցվածքը տեղադրելու համար պահանջվի նոր հողի հատկացում, ապա հողի ազդրավումն իրականացվելու է նախքան աշխատանքների սկիզբը: Ա. Սիմոնյանը պարզաբանում ներկայացրեց երկրորդ հարցի մասով և նշեց, որ վերաբնակեցման դեպքում նախատեսվում է փոխհատուցում, ոչ միայն կորցրած հողի, բնակելի և այլ շինությունների, աշխատանքի և եկամտի համար, այլ նաև այլ կորցրած գույքի, բերքի և ծառերի համար, ուստի ծառերի հատման դեպքում փոխհատուցվելու են ծառերը և բերքը: Բացի այդ, իրավունակության և փոխհատուցման մատրիցը ներառում է նաև կենսամակարդակի վերականգնման, տեղափոխման համար օժանդակություն, ինչպես նաև օժանդակություն խոցելի խմբերի համար և այլն:

Հարց 2

Որո՞նք են հիմնական տարբերությունները ՀՀ օրենքների և ՀԲ գործառնական քաղաքականությունների միջև՝ բնապահպանական փաստաթղթերի կազմման առումով:

Պատասխան

Ա. Սիմոնյանը պարզաբանեց, որ տեղական օրենսդրությամբ պահանջվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում՝ կառավարության որոշմամբ սահմանված սահմանային չափը գերազանցող տարբեր գործառույթների համար: ՀԲ 4.01 «Բնապահպանական գնահատում» ԳԲ-ն դիտարկվում է որպես համապարփակ քաղաքականություն, որը երաշխավորում է հնարավոր անբարենպաստ բնապահպանական և սոցիալական ազդեցությունների բացահայտումը, դրանց նվազեցումը և պատշաճ մեղմացումը: ՀԲ-ի քաղաքականության համաձայն յուրաքանչյուր առաջարկված ծրագրի համար կատարվում է բնապահպանական ուսումնասիրություն՝ պահանջվող բնապահպանական գնահատման ծավալը և տեսակը պարզելու նպատակով, ինչպես նաև համապատասխան անվտանգության քաղաքականությունների կիրառելիությունը հստակեցնելու նպատակով: ԿՆՃԲ ծրագիրը դասվել է «Բ» կատեգորիային և յուրաքանչյուր ճանապարհահատվածի համար մշակվելու է Բնապահպանական կառավարման պլան, մինչդեռ նման փաստաթղթի մշակումը չի պահանջվում տեղական օրենսդրության համաձայն: Բնապահպանական տեսանկյունից առավել խիստ ուղեցույցի կիրառումը (ՀԲ պահանջի) հնարավորություն է տալիս ժամանակին բացահայտելու հնարավոր անբարենպաստ բնապահպանական ազդեցությունները և առաջարկել համապատասխան մեղմացման միջացողումները՝ լավագույն բնապահպանական փորձի համաձայն:

Հարց 3

Կարո՞ղ եք պարզաբանել թե որ ճանապարհահատվածներն են ներառվելու ծրագրի երկրորդ և երրորդ տարվա աշխատանքներում:

Պատասխան

Կ. Բաղայանը ներկայացրեց, որ ծրագրի երկրորդ և երրորդ տարիների ընթացքում վերականգնման ենթակա ճանապարհների հատվածների ցանկը դեռ կազմված չէ, և մանրամասն տեղեկությունները հայտնի են միայն ծրագրի առաջին տարվա աշխատանքներում ներառված յոթ ճանապարհահատվածների համար:

Հարց 4

Ինչպե՞ս են ընտրվում ծրագրում ներառվող ճանապարհահատվածները:

Պատասխան

Կ. Բաղայանը պարզաբանեց, որ հատվածներն ընտրվում են կենսական նշանակություն ունեցող ճանապարհներից, որոնք կապում են համայնքները այլ բնակեցված վայրերի և մարզկենտրոնների հետ, և ընտրությունը կատարվում է մի շարք ցուցանիշներով վերանայում և վերլուծություն կատարելու արդյունքում:

Հանդիպումն ավարտվեց ժամը 12:15-ին:

Արջանագրությունը կազմեց է Տրանսպորտի ԾԻԳ-ի բնապահպանական և սոցիալական մասնագետ Ա. Սիմոնյանը:

ՀԱՎԵԼՎԱԾ I. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ

h/h	Անուն, Ազգանուն	Զբաղվածություն / պաշտոն	Կոնտակտային տվյալներ	Ստորագրություն
1	Վիկտոր Բախտամյան	USAID EDMC, Բնապահպանության մասնագետ		
2	Կարեն Բադայան	Տրանսպորտի ԾԻԳ, փոխտնօրեն		
3	Քաջիկ Քաբաբյան	Տրանսպորտի և կապի նախարարություն, Տրանսպորտի վարչություն, պետի տեղակալ		
4	Կարստեն Գրիգե	Kocks Consult, Ծրագրի ղեկավար		
5	Դավիթ Հովսեփյան	Ճաննախագիծ ինստիտուտ, գլխավոր ճարտարագետ		
6	Արմինե Եղիզարյան	Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Վերաբնակեցման և բնապահպանության բաժնի պետ		
7	Բագրատ Բադայան	Տրանսպորտի ԾԻԳ, Ճանապարհաշինության ծրագրերի իրականացման բաժնի պետ		
8	Վարդան Կարապետյան	Ֆինանսների նախարարություն, ԱՖԾԿԿ, ՀՄՀ-Հայաստան ծրագիր		
9	Վլադիմիր Սիդորով	“Ճանապարհ” ՍՊԸ, գլխավոր ճարտարագետ		
10	Սերգեյ Ավագյան	ՀՀ պետական փորձաքննություն, գլխավոր ճարտարագետ		
11	Գառնիկ Թադևոսյան	“Իջևանի ճանշին” ՓԲԸ, գլխավոր ճարտարագետ		
12	Արմեն Մկրտչյան	“Թալինի ճանշին” ՓԲԸ, տնօրեն		
13	Էրիկ Պողոսյան	“Սիսիանի ԲՈՒԱՏ” ՓԲԸ, փոխտնօրեն		
14	Սահակ Հարությունյան	Կոտայքի մարզ, Կոտայք համայնք		
15	Ռուբիկ Ղուկասյան	Գեղարքունիքի մարզ, Վերին Գետաշեն համայնքի ղեկավար		
16	Վրեժ Սարգսյան	Գեղարքունիքի մարզ, Մադինա համայնքի ղեկավար		
17	Վարդուի Սարգսյան	Գրասենյակի ղեկավար, Kocks Consult		
18	Արմինե Սիմոնյան	Տրանսպորտի ԾԻԳ, Բնապահպանա-կան և սոցիալական մասնագետ		

ՀԱՎԵԼԱԾ II. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՏԱՐՎԱԾ ԼՈՍԱՆԿԱՐՆԵՐ

